

Տոնապետյան
Ա.Ա.
Ալուսյան Հ.Ռ.
Գրիգորյան Ա.
Խ.

ՀՀ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱ ԾՆՈՂ ՆՈՐՄԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Երևան 2005

Գրքույկում վերլուծված է ՀՀ օրենսդրությունը՝ դրանում կոռուպցիոն հնարավորություններ ծնող դրույթների տեսանկյունից: Դիտարկված են այդ դրույթների վերացման կոնկրետ ուղիները:

Նախատեսված է օրենսդրության կատարելագործման հարցերով զբաղվող մասնագետների, պետական կառավարման մարմինների ներկայացուցիչների, իրավաբանների, իրավաբանական մասնագիտությամբ ուսանողների, ինչպես նաև հակակոռուպցիոն ռազմավարությունների հարցերով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակների համար:

© Արթուր Տոնապետյան

© «Ահաբեկչության դեմ պայքարի աջակցության կենտրոն»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԿՈՌՈՒՊՏԻԱ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ.....

ԿՈՌՈՒՊՏԻԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ: ԾՆՈՂ
ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ:

Ի՞նչ միջոցառումներ են անհրաժեշտ դատակամ
համակարգի առողջացման համար: 23

ԳԼՈՒԽ 2. ԿՈՌՈՒՊՏԻԱՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ: ԾՆՈՂ
ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ:

ԳԼՈՒԽ 3. ԿՈՌՈՒՊՏԻԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ: ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ:.....

ՀԱՎԵԼՎԱԾ. ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱԴՐԲԵՋԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ,
ՂՐԴՁՍՏԱՆԻ, ՌՈՒՄԱՍՏԱՆԻ, ՏԱՋԻԿՍՏԱՆԻ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ
ՀԱՄԱՐ ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ
ԾՐԱԳԻՐԸ:

ՀՀ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱ ԾՆՈՂ ՆՈՐՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՉԼՈՒՄ 1. ԿՈՌՈՒՊՑԻԱ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Խոսելով կոռուպցիայի մասին, հարկ է նախ և առաջ տալ դրա ճիշտ բնորոշումը: Տարբեր աղբյուրներում կան որոշակի տարածայնություններ կոռուպցիայի սահմանման հարցում: Առավել համապատասխանող բնորոշումը, մեր կարծիքով, տրված է «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» միջազգային ոչ կառավարական կազմակերպության կողմից, որը կոռուպցիան սահմանում է որպես «պաշտոնատար անձի կողմից պաշտոնական դիրքի չարաշահում՝ անձնական շահերից ելնելով»:

Որպեսզի սահմանումը լինի լիարժեք, անհրաժեշտ է տալ նաև պաշտոնատար անձ հասկացության սահմանումը: 2003 թ-ի օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 3-րդ մասում տրվում է այդ սահմանումը: Ըստ դրա, պաշտոնատար անձինք են՝

1) մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք:

2) պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև ՀՀ զինված ուժերում, ՀՀ այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

Վերը նշված սահմանումներից արդեն պարզ է, որ կոռուպցիայի ցանկացած դրսևորում քրեորեն հետապնդելի է: ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է նախատեսում ինչպես կաշառք ստանալու (311 հոդված), կաշառք տալու (312 հոդված) և կաշառքի միջնորդության (313 հոդված), այնպես էլ՝ պաշտոնական լիազորությունների չարաշահման համար (308 հոդված): Վերջինս քրեական պատասխանատվություն է սահմանում պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական

պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որը էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին: Նոր քրեական օրենսգրքով քրեական պատասխանատվություն է սահմանվել նաև կոռուպցիայի այնպիսի լայն տարածում ունեցող և օրեցօր զարգացող դրսևորման համար, ինչպիսինն է «Պաշտոնատար անձի կողմից, օրենքով սահմանված արգելքին հակառակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն հիմնադրելը կամ անձամբ կամ վստահված անձի միջոցով այդպիսի կազմակերպության կառավարմանը մասնակցելը, եթե այդ արարքները կապված են այդպիսի կազմակերպությանն արտոնություններ տրամադրելու կամ այլ ձևով հովանավորելու հետ»: Կոռուպցիայի դրսևորումներից մեկի՝ պաշտոնական կեղծիքի համար քրեական պատասխանատվություն է սահմանված նաև քրեական օրենսգրքի 314 հոդվածով: Ըստ դրա, հանցագործություն է համարվում պաշտոնատար անձի կողմից շահադիտական նպատակներով կամ անձնական այլ դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելը, կեղծում, քերվածք կամ այլ թվական գրառումներ կամ փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կեղծ փաստաթղթեր կազմելը կամ հանձնելը:

Ինչպես դժվար չէր հանդգնել, կոռուպցիայի դեմ պայքարի քրեաիրավական ռեպրեսիայի միջոցներ մեր օրենսդրությունը նախատեսել է բավարար չափով: Ավելին, նոր քրեական օրենսգրքում տեղի է ունեցել սանկցիաների զգալի մեղմացում, նկատի ունենալով, որ պաշտոնական հանցագործությունների համար նախկինում գործող սանկցիաները անհամաչափ խիստ էին: Այսպես օրինակ, «սովորական» կաշառքի համար ներկայումս ազատազրկման ձևով պատժի առավելագույն չափը հիգ տարի է, այնինչ նախկինում գործող քրեական օրենսգրքը նախատեսում էր ազատազրկում մինչև տասը տարի ժամանակով: Նույն արարքը, որը կատարվել է շորթամբ, կամ՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնության գալով, կամ՝ խոշոր չափերով, կամ՝ կրկին անգամ, պատժվում է

ազատագրկմամբ առավելագույնը տասը տարի ժամկետով, մինչդեռ նախկինում նույն արարքների համար ազատագրկում էր նախատեսված մինչև տասնհինգ տարի ժամկետով: Հիշեցնենք, որ նախկինում, առանձնապես ծանրացուցիչ հանգամանքներում կաշառք ստանալը կարող էր պատժվել նույնիսկ մահապատժով, մինչդեռ ներկայումս կաշառք ստանալու համար առավելագույն սանկցիան (ՀՀ քրեական օրենսգրքի 311 հոդվածի 4-րդ մաս) տասներկու տարի ազատագրկումն է:

Այսպիսով, օրենսդիրը ընդունել է, որ կոռուպցիայի դեմ պայքարի անարդյունավետության պատճառը քրեաիրավական ռեպրեսիայի միջոցների բացակայությունը կամ մեղմությունը չէ:

Այնուամենայնիվ, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային ոչ կառավարական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից Մեծ Բրիտանյայի, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ֆինանսավորմամբ իրականացված՝ «Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորումների գնահատումը» թեմայով հասարակական կարծիքի ուսումնասիրությամբ պարզվել է, որ հարցվողների բոլոր խմբերի ներկայացուցիչները կոռուպցիան Հայաստանում համարում են էական հիմնախնդիր:

Ըստ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ»-ի, «կոռուպցիայի ընկալման» համաթիվը, որն ամփոփում և արտացոլում է գործարար և գիտական շրջանակների հասարակական կարծիքի 17 տարբեր տեսակի ուսումնասիրությունների արդյունքներ, ինչպես նաև ռիսկերի գնահատման մասնագետների կողմից կոռուպցիայի ընկալումներ, 2003 թվականի համար ընդգրկվել էր 133 երկիր: Այդ ցուցանիշի հաշվարկման համար հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է պետական կառավարման համակարգում կոռուպցիայի վրա, իսկ կոռուպցիայի քաղաքական և վարչական տեսակները չեն առանձնացվում: Վերլուծությունը ցույց է տվել, որ Հայաստանի Հանրապետությունը կոռուպցիայի ընկալման ցուցանիշով գտնվում էր 78 տեղում, որը կիսում էր 4 ուրիշ երկրների հետ:

Այդ դեպքում, հարց կարող է առաջանալ. իսկ ինչն է պատճառը, որ կոռուպցիայի դեմ պայքարը մինչ այժմ զգալի արդյունքների չի բերում, իսկ որոշ անկախ

զնահատականներով, կոռուկացվածության մակարդակը զնալով աճում է: Ինչ մեխանիզմներ է պետք աշխատեցնել՝ կոռուպցիայի դեմ պայքարում հաջողությունների հասնելու համար:

Կոռուպցիայի դեմ պայքարը կարող է արդյունավետ լինել, եթե միաժամանակ գործեն ինչպես կանխարգելիչ, այնպես էլ ռեպրեսիվ մեխանիզմները:

Կանխարգելիչ մեխանիզմների մասին կխոսվի քիչ հետո: Իսկ այժմ վերլուծենք, թե ինչու, չնայած օրենսդրական բավարար հիմքերի առկայության, չեն գործում, կամ՝ ծայրահեղ անբավարար են գործում քրեաիրավական ռեպրեսիայի մեխանիզմները:

Կոռուպցիայի դեպքերի բացահայտման, քննության և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է իրավապահ մարմինների և դատական համակարգի պատշաճ գործունեությունը: Հասարակությունում պետք է արմատավորված լինի կոռուպցիայի (ինչպես և ցանկացած այլ հակաօրինական գործողության) համար պատժի անխուսափելիության համոզմունքը: Իրավապահ մարմինները և դատական համակարգը, կոռուպցիայի դեմ պայքարում իրենց դերը կատարելու համար պետք է գործեն արդյունավետ: Իսկ դրա համար, այդ մարմինները նախ և առաջ իրենք չպետք է լինեն կոռուկացված:

ՀՀ Կառավարության 2003 թ-ի նոյեմբերի 6-ի որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրում դատական համակարգում կոռուպցիայի կանխարգելման և դատական անաչառության ապահովմանը վերաբերող հարցերին նվիրվել է ընդամենը երկու էջ՝ ծրագրի վերջերում: Այդ ծավալը, ակնհայտորեն անհամաչափ է իրավիճակին և չի արտացոլում ինչպես դատական համակարգի կոռուկացվածության աստիճանը (որն ամենաբարձրներից մեկն է պետական մարմինների համակարգում), այնպես էլ այն դերին, որը դատարանները խաղում են այլ մարմինների կոռուկացման հարցում:

Դրա հետ մեկտեղ, ծրագրում նշված միջոցառումները ակնհայտորեն անբավարար են դատական համակարգում կոռուպցիայի կանխարգելման և դատական անաչառության ապահովման համար:

Որպես անհրաժեշտ միջոցառումներ նշված են՝

- դատարանների նախագահների համար պաշտոնավարման ժամկետի սահմանումը՝ հինգ տարի ժամկետով, պայմանով, որ նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել այդ պաշտոնում,
- վարչարարության հիմունքների և վարչական վարույթի, ինչպես նաև վարչական դատավարության մասին օրենքների, վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունումը,
- ինտերնետային էջում դատարանների դատավճիռների և վճիռների տեղադրումը, դատարաններում մամլո խոսնակի ինստիտուտի ստեղծումը,
- դատավորների որակավորման բարձրացումը, դատավորների աշխատավարձերի բարձրացումը, դատական միասնական վարչարարության հաստատումը, դատարանների տեխնիկական հագեցվածության ապահովումը,
- վկաների պաշտպանության ապահովումը,
- դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության և քրեակատարողական ծառայության աշխատանքների բարելավումը,
- անկախ փաստաբանական ինստիտուտի ձևավորումը
- միջնորդ դատարանների մասին օրենսդրության համապատասխանեցումը միջազգային չափանիշներին:

Նշված միջոցառումների մի մասը, անկասկած, կարևոր են դատական համակարգը առողջացնելու համար: Սակայն դժվար է պատկերացնել, թե ինչ կերպ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կամ քրեակատարողական ծառայության աշխատանքների բարելավումը, վկաների պաշտպանության ապահովումը դատարանների տեխնիկական վերազինումը կամ դատարաններում խոսնակի ինստիտուտի ձևավորումը կարող են օգնել դատական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարին: Մնում է փաստել, որ Կառավարության ծրագրում մակերեսային

մոտեցում է ցուցաբերվել դատական համակարգում կոռուպցիան ծնող պայմանները բացահայտելու և դրա դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների մշակման հարցերին: Չի կարևորվել դատական համակարգի դերը պետական իշխանության մյուս ճյուղերում կոռուպցիայի կանխարգելման հարցում, թերազնահատվել է դատական իշխանության հնարավորությունը ազդելու մյուս բոլոր ոլորտներում կոռուպցիայի չափերի վրա:

Փորձենք մեկ այլ տեսանկյունից նայել վերը բարձրացված հարցերին:

**ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ: ԾՆՈՂ
ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՎԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ:**

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային ոչ կառավարական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ հարցումներին մասնակցած քաղաքացիների 84 տոկոսը, ձեռներեցների 92 տոկոսը և պետական պաշտոնյաների 88,5 տոկոսը համարում է, որ դատարաններում տեղ են գտնում կաշառակերության դեպքեր, ընդ որում, քաղաքացիների և ձեռներեցների կարծիքով, պետական կառույցների շարքում դատարանները ամենակաշառված հաստատություններն են: Հայաստանի ժողովրդավարական ֆորում հասարակական կազմակերպության կողմից անցկացված հասարակական կարծիքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հարցմանը մասնակցած ընտանիքների 59 տոկոսը ուղղակի չի դիմում դատարան, որովհետև համոզված է, որ առանց կաշառքի դատարաններում ոչ մի հարց չի լուծվում:

Դատական համակարգում կոռուպցիան ունի մի շարք պատճառներ, որոնցից են՝

Օրենքի անկատարությունը, որը չափից մեծ դաշտ է թողնում առանց կարգավորման, այսինքն՝ դատավորի հայեցողությանը: Օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխան, շորթման համար կարող է պատիժ նշանակվել ուղղիչ աշխատանքներ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կալանք՝ առավելագույնը երեք ամիս

ժամկետով, կամ ազատագրկում՝ առավելագույնը չորս տարի ժամկետով և տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հիսնապատիկի չափով: Ու թեև նույն օրենսգրքի 10 գլխում սահմանված են պատիժ նշանակելու սկզբունքները, այնուամենայնիվ դրանք կոնկրետ չեն և վերջ ի վերջո, պատժաչափի հարցը մնում է դատավորի հայեցողությանը: Սա, հաշվի առնելով քրեական օրենսգրքի սանկցիաների մեծ լայնույթը, կոռուպցիան ծնող պայմաններից մեկն է: (Չայտնի է դեպք, երբ միևնույն պայմաններում 12000000 դրամի յուրացման համար անձին դատապարտել են ազատագրկման 6 տարի ժամկետով, իսկ մեկ այլ անձի՝ երկու հարյուր անօրվա մեծ օրենսօրքի նույն հոդվածով դատապարտել է անհամեմատ ավերի մեղմ պատժի: Այսպիսի դեպքերը չափազանց շատ են:)

Կոռուպցիա ծնող մյուս պատճառը դատավորների և դատարանի աշխատակազմի ցածր աշխատավարձերն են:

Դատական համակարգին ծանոթ ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ դատարանի աշխատանքների հետ կապված ոչ բոլոր ծախսերն է հատուցվում պետական բյուջեից: Իր աշխատանքը ապահովելու համար դատավորը ստիպված է հաճախ ծախսել այնպիսի գումարներ, որոնք համեմատելի են իր աշխատավարձի հետ, որն առանց այդ էլ բարձր չէ:

Դատարանի աշխատակազմի ցածր աշխատավարձը նույնպես պետք է դասվի դատական համակարգում կոռուպցիան ծնող և խթանող պատճառների շարքին: Դա շատ դեպքերում դրդում է աշխատակազմի աշխատակիցներին փնտրել եկամուտի այլ՝ անօրինական ճանապարհներ: Բացի այդ, աշխատակիցներին չկորցնելու համար դատավորները հաճախ իրենք են ստիպված լինում իրենց միջոցներից հավելյալ վճարել աշխատակիցներին:

Դատական համակարգում կոռուպցիա ծնող պատճառներից մեկը պետք է համարել այն, որ քաղաքացիների մեծ մասը գրեթե տեղեկություններ չունեն օրենքների և մասնավորապես, իրենց սեփական իրավունքների մասին: Չիմանալով սեփական իրավունքները քաղաքացին հաճախ հակված է լինում իր հարցերը դատարանում լուծել կաշառքի միջոցով: Այդպիսի քաղաքացիները հաճախ չեն հավատում, որ հնարավոր է դատարանում պաշտպանել սեփական իրավունքը, առանց դատավորի հետ «լեզու գտնելու»: Ընդ որում,

չունենալով գոնե տարրական պատկերացումներ օրենքի մասին, այդպիսի զանգվածը չի ցանկանում դիմել փաստաբանի, համոզված լինելով, որ եթե միևնույն է դատավորին պետք է կաշառք տալ, ապա փաստաբանին վճարած գումարը աննպատակ է: Հաճախ փաստաբանին դիմում են միայն այն բանից հետո, երբ չեն կարողանում ինքնուրույն «լեզու գտնել» դատավորի հետ, ակնկալելով միայն մի բան՝ որ փաստաբանը ինքը կկարողանա «լեզու գտնել» և կաշառքը հասցնել դատավորին: Այս կապակցությամբ վերջին տարիներին նկատվում է մի ֆենոմեն. փաստաբանների ծառայություններին ավելի հաճախ դիմում են այն անձինք, ովքեր առավել լավ են ծանոթ օրենքներին և իրենց իրավունքներին: Մյուսները փորձում են իրենց հարցերը լուծել դատավորների հետ «լեզու գտնելով»:

Դատական համակարգում կոռուպցիայի զարգացմանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում մեխանիզմներ, որոնք պարտադիր դարձնեին օրենքի միատեսակ կիրառումը բոլոր դատարանների կողմից: Օրենքի մեկնաբանություններ տալու իրավունքը վերապահված է դատարանների նախագահների խորհրդին, սակայն նույնիսկ այդ մարմնի կողմից տրված մեկնաբանությունները ունեն ոչ թե պարտադիր ուժ, այլ՝ խորհրդատվական նշանակություն:

Նախկինում՝ մինչև 1998 թ-ը դեռ գործում էին խորհրդային դատական համակարգից ժառանգված մեխանիզմները՝ ՀՀ գերագույն դատարանի պլենումը իրավասու էր տալ օրենքի պարզաբանումներ, որոնք պարտադիր էին Հայաստանի բոլոր դատարանների համար: Այդ մեխանիզմը, չնայած իր որոշակի թերությունների, կարևոր դեր էր խաղում դատական ատյանների կամայականությունները կանխելու հարցում: Դատական պրակտիկան միասնական էր, նվազում էր օրենքի կիրառման հարցում դատական սխալի հնարավորությունը: Սա դատական համակարգի ինքնամաքրման կարևորագույն մեխանիզմներից մեկն էր, որից, երկար չմտածելով, մենք հրաժարվեցինք 1998 թ-ից սկսված լայնամասշտաբ դատաիրավական բարեփոխումների արդյունքում:

Հրաժարվելով նախկինում գործող մեխանիզմներից, օրենսդիր իշխանությունը դրա փոխարեն չմտածեց ստեղծել նույն նպատակին ծառայող մեկ այլ մեխանիզմ:

Այսօր Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը չի բացառում, որպեսզի օրենքի միևնույն պահանջը տարբեր կերպ մեկնաբանվի և կիրառվի տարբեր դատարաններում: Սա չափազանց վտանգավոր երևույթ է, քանի որ նման դեպքում դատական պրոցեսի ելքը կախված է ոչ թե գործի հանգամանքներից, այլ այն բանից, թե որ դատարանը կքննի այդ գործը: Վիճակը հասել է արսուրդի՝ հայտնի են դեպքեր, երբ միևնույն դատարանը, օրենքի միևնույն պահանջը տարբեր գործեր քննելիս բոլորովին տարբեր ձևով է մեկնաբանում: Ավելին, մեր օրենսդրությունը չի բացառում, որ նույնիսկ այդ նույն դատավորը, նույն օրը երկու համանման գործեր քննելիս տարբեր ձևով մեկնաբանի օրենքի նույն դրույթը:

Որպեսզի չթվա, որ վերը ասվածը չափազանցություն է, կամ՝ հազվադեպ պատահող երևույթ, նշենք, որ նույնիսկ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը (դատավորների միևնույն կազմով) ունի մի շարք որոշումներ, որոնցում օրենքի միևնույն պահանջը տրամագծորեն հակառակ ձևով է մեկնաբանում: Իսկ Պալատի նախագահը անգամ հրապարակել է մի գրքույկ, որում գիտականորեն հիմնավորում է դատավորի իրավունքը՝ ամեն անգամ նորովի մեկնաբանելու օրենքի միևնույն պահանջը: Պալատի նախագահը նշում է. «դատավորը չպետք է գերի դառնա իր իսկ նախկին մեկնաբանությանը, նա կարող է ազատ մեկնաբանել օրենքը», կամ՝ «դատական նախադեպը ամենևին էլ պարտադիր չէ. ամեն մի գործով կարող է տրվել նոր մեկնաբանություն»: Այլ կերպ ասած, անձը նույնիսկ նույն դատարանում, նույն դատավորի մոտ ցանկացած պահի չի կարող համոզված ասել, թե այս անգամ ինչ կերպ կմեկնաբանվի և իր նկատմամբ կկիրառվի օրենքը: Ստացվում է, որ այն, թե ինչ դատավճիռ կկայացնեն անձի նկատմամբ քրեական գործով, կախված է ոչ այնքան նրա կատարած արարքից, որքան այն բանից, թե որ դատարանում նրան կդատեն, որ դատավորը կդատի և նույնիսկ՝ շաբաթվա որ օրը կդատի, քանի որ այդ նույն դատավորը այսօր կարող է մի ձևով մեկնաբանի օրենքը, իսկ վաղը՝ բոլորովին այլ ձևով:

Սա ևս մի կարևոր պատճառ է, թե ինչու քաղաքացիները, կորցնելով հավատը դեպի դատարանները և արդարադատությունը, գերադասում են իրենց հարցերը լուծել կաշառքի միջոցով: Տարածված արտահայտություն է.

«Դատավոր է, թուղթն էլ է նրա ձեռքում, գրիչն էլ, կնիքն էլ, ինչ կուզի՝ այն էլ կգրի»:

Ըդիանուր առմամբ, իհարկե, հնարավոր չէ իրականացնել արդարադատություն, չթողնելով որոշ հարցերի լուծումը դատավորի հայեցողությանը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (հոդված 53), ինչպես և քրեական դատավարության օրենսգիրքը (հոդված 127), սահմանում են, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ինչպես տեսնում ենք, դատավորի սուբյեկտիվ գնահատման առարկա կարող են լինել միայն ապացույցները, այլ ոչ թե օրենքները: Օրենքները Հայաստանի Հանրապետությունում բոլոր դատարանները պետք է մեկնաբանեն միատեսակ, անկախ այն բանից, թե որ դատավորն է քննում գործը, ում վերաբերյալ և երբ: Հակառակ դեպքում, խախտվում է իրավունքի ամենակարևոր սկզբունքը՝ բոլորի հավասարությունը օրենքի և դատարանի առջև, ինչը պարարտ հող է ստեղծում դատական համակարգում կոռուպցիայի ծաղկման համար:

Դատական համակարգում կոռուպցիայի կանխարգելման համար մեծ դեր կարող էր խաղալ ուժեղ փաստաբանությունը: Կոռուպցիայի ռիսկը նվազում է, եթե գործին մասնակցում է լավ պատրաստված, հեղինակություն վայելող և իր վստահորդի շահերը հետևողականորեն պաշտպանող փաստաբանը: Սակայն այժմ փաստաբանությունը Հայաստանում ապրում է իր ոչ ամենալավագույն ժամանակները: Փաստաբանությունը թույլ է, օրենքներով, հատկապես՝ քրեական դատավարության օրենսգրքով, կանխորոշված է նրա երկրորդական դերը դատավարությունում: Փաստաբանությունը, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, մեծ հեղինակություն չի վայելում հասարակության աչքերում: Փաստաբանների զգալի մասը, չհավատալով արդարադատության իրականացման հնարավորությանը, իրենք իրենց ընկալում են բացառապես որպես միջնորդ իրենց վստահորդի և դատավորի միջև:

Հասկանալի է, որ փաստաբանությունը, իր ներկայիս վիճակում, ոչ միայն ընդունակ չէ դրական դեր խաղալ դատական համակարգի առողջացման հարցում, այլ հակառակը՝ ինքն է հաճախ խթանում կոռուպցիոն երևույթերը:

Կան դեպքեր, երբ նույնիսկ այն քաղաքացուն, որը ի սկզբանե հակված չի եղել դատավորի հետ «լեզու գտնել», փաստաբանները հակում են ոչ օրինական գործարքի մեջ մտնել դատավորի հետ, ասելով, որ հակառակ դեպքում գործն այդ քաղաքացու համար բարեհաջող ավարտ չի կարող ունենալ:

Դատավորների անկախությունը հռչակված է մի շարք իրավական ակտերում, սակայն իրականում դատավորները լիարժեք անկախ չեն: Այս հանգամանքը իր հերթին նպաստում է դատական համակարգի կոռուպացմանը:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 94 հոդվածին համապատասխան, արդարադատության խորհրդի նախագահը Հանրապետության Նախագահն է: Խորհրդի փոխնախագահներն են արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը: Խորհրդի կազմի մեջ մտնում են ՀՀ Նախագահի կողմից հինգ տարի ժամկետով նշանակվող տասնչորս անդամ, որոնցից երկուսը՝ իրավաբան գիտնական, ինը՝ դատավոր, երեքը՝ դատախազ: Խորհրդի երեքական անդամ նշանակվում են առաջին ատյանի դատարանների, վերաքննիչ դատարանների և վճռաբեկ դատարանի դատավորներից: Խորհրդի դատախազ անդամների թեկնածությունները առաջադրում է գլխավոր դատախազը:

Սահմանադրության 95 հոդվածին համապատասխան, արդարադատության խորհուրդը, արդարադատության նախարարի առաջարկով, կազմում և ՀՀ Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների պաշտոնեական պիտանելիության և ծառայողական առաջխաղացման ամենամյա ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները, առաջարկում է դատարանների նախագահների, վճռաբեկ և վերաքննիչ դատարանների դատավորների թեկնածությունները, եզրակացություն է տալիս արդարադատության նախարարի ներկայացրած մյուս դատավորների թեկնածությունների վերաբերյալ, առաջարկ է ներկայացնում դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորին կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին, դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության:

«Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին համապատասխան, դատավորի լիազորությունների դադարեցման հիմք է, մասնավորապես, արդարադատությունն իրականացնելիս նրա կողմից թույլ տրված օրենքի կոպիտ խախտումը (իսկ թե ինչպիսի խախտումներն է պետք որակել որպես կոպիտ, որևէ օրենքով սահմանված չէ): Ընդ որում, նույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան, դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցով միջնորդությամբ արդարադատության խորհուրդ է դիմում արդարադատության նախարարը:

Այսպիսով, վերը նշված մեխանիզմներով դատավորները կախման մեջ են դրված գործադիր իշխանությունից: Ընդ որում, դատավորի պաշտոնական լիազորությունների դադարեցման գործընթացը հրապարակային և թափանցիկ չէ: Հնարավոր չէ պարզել, թե որն է արդարադատության նախարարությունը համարում օրենքի կոպիտ խախտում, իսկ որ խախտումները չպետք է դիտվեն որպես այդպիսիք, ինչ չափանիշներով է առաջնորդվում այս հարցը լուծելիս արդարադատության նախարարը և արդարադատության խորհուրդը: Հայտնի է դեպք, երբ դատավորի լիազորությունները դադարեցվել են քրեական գործի քննությունը ձգձգելու համար: Սակայն որևէ կարգապահական տույժ չի կրել մեկ այլ դատավոր, որը դատավճռում գրել է. «նախաքննության ժամանակ վկաների նկատմամբ կիրառվել են բռնություններ, սակայն դրանք կիրառվել են ճշմարտությունը պարզելու համար»:

Նման անորոշ չափանիշները և դատավորի կոշտ կախվածությունը գործադիր իշխանությունից հանգեցնում են նրան, որ դատավորները հիմնականում խուսափում են կայացնել այնպիսի վճիռներ, որոնք հակասեն գործադիր մարմնի (և դրա բարձրաստիճան պաշտոնյաների) շահերին: Այդ պատճառով շատ դատավորներ, իրենց պաշտոնը չկորցնելու համար, արդարադատությունն իրականացնելիս խախտում են օրենքը հօգուտ գործադիր մարմնի (կամ՝ պետական բարձրաստիճան պաշտոնյաների) շահերի: Այդպիսի դրսևորման վառ օրինակներ կարելի է տեսնել Հյուսիսային պողոտայի հետ կապված դատական վեճերում, երբ մարդկանց իրավունքների խախտումները կրել են զանգվածային բնույթ:

Այս երևույթը ևս պետք է դիտել որպես կոռուպցիայի մի դրսևորում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26 գլուխը սահմանում է, որ դատարանում կարող են վիճարկվել պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունները (անգործությունը): Սակայն դատական մարմինների կախումը գործադիր իշխանություններից դարձնում է ոչ արդյունավետ դատական պաշտպանության այս մեխանիզմը: Երե վիճարկվում է բարձրաստիճան պետական պաշտոնյայի ընդունած ակտը կամ գործողությունը, դատարանները, որպես կանոն, կաշկանդված են լինում նման գործերով քաղաքացիների դիմումը բավարարելու հարցում:

Սա մի այնպիսի բացասական երևույթ է, որը կոռուպցիա է ծնում ինչպես դատական մարմիններում, այնպես էլ հենց գործադիր իշխանության մարմիններում: Այսպես, հանդիպելով իր իրավունքների խախտում գործադիր իշխանության մարմիններում, քաղաքացին ունի երկու ելք՝ կամ բողոքարկել այդ մարմնի գործողությունները դատարան, կամ՝ փորձել այդ մարմնի աշխատակիցներին կաշառելու միջոցով հասնել իր ուզածին: Այսպիսով, կոռուպցիայի հաղթահարման ամենակարևոր պայմաններից մեկը նա է, որ քաղաքացին ընկալի, որ ինքը ընդունակ է իր իրավունքների պաշտպանությանը հասնել օրինական մեխանիզմներով, առանց կաշառք տալու: Տեսնելով, որ դատարանները ունակ չեն պաշտպանելու իր իրավունքները պետական մարմինների պաշտոնյաների կամայականություններից, քաղաքացին արդեն չի դիմում դատարան իր խախտված իրավունքները պաշտպանելու համար, այլ նախընտրում է իր հարցերը լուծել պետական մարմիններում չինովնիկների հետ «լեզու գտնելու» միջոցով:

Դատարաններն այսօր կոշտ կախման մեջ են գտնվում նաև դատախազությունից: Սեծամասամբ քրեական գործերով դատական քննությունը ձևական բնույթ է կրում: Դատարանները պարզապես իրենց կնիքով վավերացնում են դատախազության կողմից կայացված որոշումները, տալով դրանց օրինականության տեսք: Դրա վառ ապացույցներից մեկը նա է, որ վերջին տարիների ընթացքում դատարանները պրակտիկորեն չեն կայացրել արդարացման դատավճիռներ: Հայաստանի Հանրապետության դատավորների գերակշռող

մեծամասնությունը իրենց ողջ աշխատանքային գործունեության ընթացքում ոչ մի անգամ արդարացման դատավճիռ չեն կայացրել: Դժվար է պատկերացնել, որ այս դատավորները երբևէ չեն քննել այնպիսի քրեական գործեր, որոնցով մեղադրանքը բավարար չափով ապացուցված չի եղել: Պարզապես այս դատավորները, անկախ մեղադրանքի հիմնավորվածության աստիճանից, բոլոր դեպքերում դատապարտել են անբաստանյալին: Պատճառը՝ դատախազությունից կախումն է, որը այսօր, կամա թե ակամա զգում է քրեական գործեր քննող գրեթե յուրաքանչյուր դատավոր: Որոնք են այս կախման պատճառները:

Նախ, ինչպես արդեն ասվեց, ՀՀ գլխավոր դատախազը, ի պաշտոնե, արդարադատության խորհրդի անդամ է: Բացի նրանից, ՀՀ Սահմանադրության 94 հոդվածին համապատասխան, արդարադատության խորհրդի կազմում կա նա երեք դատախազ: Հաշվի առնելով արդարադատության խորհրդի դերը դատավորներին պաշտոնի նշանակելու, նրանց լիազորությունները դադարեցնելու, պաշտոնական առաջխաղացման և ՀՀ Սահմանադրության 95 հոդվածով նախատեսված այլ հարցերում, դատախազների նման ներկայացուցչությունը արդարադատության խորհրդի կազմի մեջ չի կարող կախման մեջ չդնել դատավորներին դատախազության ղեկավարությունից: Հայտնի է դեպք, երբ դատավորը, առանձնախոսակցության ընթացքում հայտնել է, որ իր վարույթում գտնվող քրեական գործերից մեկի կապակցությամբ իրեն կանչել էր գլխավոր դատախազի տեղակալը և նա «...զնայցել է դատախազի մոտ ու զեկուցել գործը»:

Բացի այդ, հայտնի են քրեական գործեր քննող մի շարք դատավորներ, այդ թվում՝ բարձրագույն դատական ատյանում, որոնց զավակները աշխատում են ՀՀ դատախազությունում: ՀՀ Սահմանադրության 103 հոդվածին համապատասխան, ՀՀ դատախազությունը միասնական կենտրոնացված համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:

Այսպիսով, այն դատավորները, որոնց զավակները աշխատում են դատախազության համակարգում, հաճախակի քննում են քրեական գործեր, որոնցով մեղադրական եզրակացությունները հաստատել են իրենց զավակների անմիջական վերադաս դատախազները: Այս պայմաններում

առկա են կոռուպցիոն ռիսկեր այն առումով, որ դատավորը կձգտի հարաբերությունները չփչացնել դատախազության հետ, որպեսզի ապահովի իր զավակի ապահով աշխատանքը դատախազության համակարգում:

Կա ևս մեկ պատճառ, որով պայմանավորված է դատախազությունից դատական համակարգի կախյալ վիճակը: Հայտնի են դեպքեր, երբ այս կամ այն գործը քննելիս այս կամ այն դատավորը թույլ է տվել օրենքի այնպիսի խախտում, որը հիմք է ծառայել այդ փաստի առթիվ քրեական գործ հարուցելու համար: Գործը քննվել է դատախազությունում, սակայն հետագայում որևէ հիմքով կարճվել ու մնացել է դատախազության արխիվում, իսկ դատավորը շարունակել է աշխատել: Այս վիճակը չի կարող կախման մեջ չդնի դատավորին, քանի որ ցանկացած պահի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21 հոդվածի կարգով, նոր երևան եկած հանգամանքների հիմքով, ՀՀ գլխավոր դատախազը կարող է վերացնել քրեական գործը կարճելու մասին որոշումը և հանձնարարի շարունակել գործի քննությունը այդ դատավորի նկատմամբ:

Շատերին հայտնի մի օրինակ. 1998 թ-ին քրեական պատասխանատվության էր ենթարկվել մի երիտասարդ՝ ամենածանր հանցագործություններից մեկը կատարելու համար: Սուտ 6 տարի անազատության մեջ գտնվելուց հետո նա ազատ արձակվեց, քանի որ պարզվեց, որ իրականում ինքը չի կատարել այդ հանցագործությունը: Պարզվել է նաև հանցագործության իրական կատարողը, գլխավոր դատախազը իր աշխատասենյակ է հրավիրել ամենդ դատապարտվածին և ներողություն խնդրել ողջ դատախազության համակարգի անունից: Այս ամենը հեռարձակվել է հեռուստատեսությամբ, լուսաբանվել մամուլում: Եղան հայտարարություններ այն մասին, որ փաստի առթիվ հարուցվում է քրեական գործ, այն անձինք, ովքեր մեղավոր են այդ երիտասարդին անհիմն դատապարտելու մեջ, կենթարկվեն քրեական պատասխանատվության:

Ստացվում է, որ գրեթե անվիճելիորեն պատասխանատվության պետք է ենթարկվեին առաջին հերթին այն դատավորները, որոնց դատական սխալի արդյունքում է ամենդ անձը դատապարտվել ամենածանր հանցագործության համար և 6 տարի գտնվել անազատության մեջ: Սակայն

կանխատեսելի է, որ դատավորներից և ոչ ոք չի ենթարկվելու պատասխանատվության, քանի որ դատախազությանը այդպիսի դատավոր ունենալը ավելի ձեռնտու է, քան՝ նրան քրեական պատասխանատվության ենթարկելը. այսուհետև արդեն դատախազությունը այդ դատավորների նկատմամբ ունի անխափան գործող լծակ (եթե մինչ այժմ դեռ չուներ):

Հիշարժան է նմանատիպ մի դեպք, որը տեղի էր ունեցել շուրջ տասը տարի առաջ: Նույն պարագաներում բացահայտվեց, որ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված դիտավորյալ սպանության համար դատապարտվել և տարիներ շարունակ պատիժ էր կրել անմեղ անձ: Սակայն հետագայում այդ գործը քննողներից ու այդ անձին դատապարտողներից և ոչ ոք պատասխանատվության չենթարկվեց, ավելին՝ բոլորը ստացան ավելի բարձր դատական պաշտոններ, իսկ գործը քննող քննիչը հետագայում նշանակվեց դատավոր:

Այսպիսով, շատ դատավորների նկատմամբ դատախազությունը ունի ազդեցության լծակներ, իսկ թե դրանք կօգտագործվեն կամ ոչ՝ կախված է դատախազության ղեկավարության քնահաճույքից: Չի բացառված, որ դատավորների կողմից կատարված այնպիսի գործողություններ, որոնք օբյեկտիվորեն հանցակազմի հատկանիշներ են պարունակում, դատախազության կողմից պատշաճ քրեաիրավական գնահատականի չեն առժամանակում՝ հետագայում դատավորների կողմից դատախազության նկատմամբ համարժեք հանդուրժողական վերաբերմունք ակնկալելով:

Այս կապակցությամբ ուշագրավ է ևս մեկ փաստ: Մանուլում հայտարարվեց, որ դատախազությունը հարուցել է քրեական գործ ակնհայտ անօրինական վճիռներ կայացնելու փաստի առթիվ (վճիռները վերաբերվում են Երևանի կենտրոնում անօրինական զբաղեցված հողամասերի և ինքնական շինությունների օրնականացումներին): Չի բացառվում, որ այս դեպքում ևս իրադարձությունները զարգանան վերը նկարագրված սցենարով: Պետք է նկատել, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավորները, որոնց անունները շոշափվում էին այդ գործերի կապակցությամբ, հենց այն

դատավորներն են որոնք համեմատաբար քիչ էին ենթարկվում դատախազության ճնշումներին:

Դատախազությունից դատական համակարգի կախյալ վիճակը նույնպես կոռուպցիա ծնող երևույթներից մեկը պետք է համարել, քանի որ քաղաքացիները քրեական գործերով հիմնականում չեն ակնկալում, որ դատարանում որևէ ձևով կարելի է պայքարել մեղադրանքի դեմ և հակված են իրենց հարցերի լուծման համար դիմել կաշառքի կամ ծանոթությունների:

Կոռուպցիա ծնող պայմաններից մեկը պետք է համարել դատարաններում դատավորների միջև գործերի բաշխման գոյություն ունեցող կարգը: ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես, քրեական դատավարության օրենսգրքի 6 գլուխը, քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2 և 12 հոդվածները հստակորեն սահմանում են գործերի ենթակայությունը և ընդդատությունը, ընդդատության փոփոխման դեպքերը և կարգը: Նշված օրենքները, սահմանելով այն դատարանները, որոնք պետք է քննեն այս կամ այն գործը, չեն սահմանում սակայն, թե տվյալ դատարանում ինչ սկզբունքով պետք է գործերը բաշխվեն դատավորների միջև: Դրանից ելնելով, գործում է տարիներով ձևավորված սովորույթը, երբ տվյալ դատարանի դատավորների միջև գործերը բաշխում են դատարանների նախագահները: Օրենքի այս բացը կոռուպցիայի համար լայն դաշտ է բացում: Այսպես, դատարանների նախագահները հնարավորություն են ստանում իրենց վարույթ վերցնել, կամ իրենց կողմից հովանավորվող դատավորներին հանձնարարել (ներքին խոսակցություններում՝ «մակագրել») այն գործերը, որոնք որոշակի եկամուտներ կամ այլ բարիքներ են խոստանում այն քննող դատավորին: Չի բացառվում նաև նման գործերից ստացված եկամուտների բաշխումը դատարանի նախագահի և այդ դատավորի միջև:

Տարիներ շարունակ, այս երևույթի դեմ պայքարի համար, ընդունված էր կարգ (նույնպես ոչ թե օրենքով, այլ՝ ներքին կարգով), ըստ որի տվյալ առաջին ատյանի դատարանի տարածքը բաժանված էր ենթատարածքների՝ դատարանի դատավորների միջև, որից ելնելով, քաղաքացիական գործերը դատավորների միջև բաժանվում էին ըստ այդ ենթատարածքների: Սակայն այդ կարգը պահպանվում էր ոչ

բոլոր քաղաքացիական գործերով, իսկ բացի այդ, քրեական և վարչական գործերը բաշխվում էին դատարանների նախագահների կողմից՝ կամայականորեն: Մի քանի տարի շարունակ Երևանի առաջին ատյանի դատարանների մեծամասնությունում նույնիսկ քաղաքացիական գործերը բաշխվում էին դատարանների նախագահների կողմից:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի կողմից 2004-2005 թվականներին իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրում կարևորվել է դատավորների միջև գործերի բաշխման հարցը: Այդ ծրագրի 7-րդ կետը նախատեսում է, որ անհրաժեշտ են միջոցառումներ, որոնք կբացառեն գործերի բաշխման վրա շահագրգիռ կողմերի ազդեցությունը և այդ փուլում ցանկացած սուբյեկտիվ գործոն: Դրանից ելնելով առաջարկվել է մշակել և ներդնել գործերի բաշխման համակարգչային կարգ:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 14.06.2004 թ. թիվ 54 որոշմամբ նախատեսվում է, որ քրեական և վարչական գործերը դատավորների միջև պետք է բաշխվեն ըստ հերթականության և հավասարապես: Նույն կարգն է նախատեսվում նաև դատավճիռների կատարման ընթացքում ծագող հարցերի, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման, դադարեցման, փոփոխման վերաբերյալ հարցերի քննության համար: Նույն կարգին համապատասխան, քաղաքացիական գործերը դատավորների միջև պետք է բաշխվեն տարածքային սկզբունքով, իսկ յուրաքանչյուր դատավորին ամրակցված տարածքը սպասարկելու է մեկ տարվա ընթացքում՝ հերթականությամբ փոփոխվելու պայմանով: Նախատեսվում է, որ դատարանի նախագահը, այնուամենայնիվ, իրավասու է, ելնելով քրեական, քաղաքացիական գործի ծավալից ու բարդությունից, հերթական դատավորի ծանրաբեռնվածությունից, գործը հանձնարարել մեկ այլ դատավորի:

Սակայն, «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածին համապատասխան, դատարանների նախագահների խորհրդի կողմից օրենքի կիրառման վերաբերյալ տրված պարզաբանումները կրում են խորհրդատվական բնույթ և հետևապես, 14.06.2004 թ. թիվ 54 որոշումը չկատարելը չի կարող դիտվել որպես օրենքի խախտում: Այսպիսով, կարելի է մեծ հավանականությամբ կանխատեսել, որ դատարանների

Ոստիկանների խորհրդի կողմից սահմանված վերը նշված կարգը երկար չի գործի և հաճախակի (եթե ոչ համատարած) կլինեն դեպքեր, երբ դատարանների Ոստիկանները, ելնելով անձնական կամ այլ շահագրգռվածությունից, կամայականորեն կփոփոխեն նշված որոշմամբ սահմանված կարգը:

Առհասարակ, այս կամ այն գործը քննելու իրավասությունը ինչպես դատարանի, այնպես էլ յուրաքանչյուր դատավորի համար, կարող է սահմանվել միմիայն օրենքով: Այսպես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից ... դատաքննության իրավունք (այս առումով հարկ է նշել, որ գործը միանձնյա քննող դատավորը հանդես է գալիս որպես դատարան):

Վերը նկարագրված պայմաններում Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրում դատական համակարգում կոռուպցիայի կանխարգելման և դատական անաչառության ապահովմանը վերաբերող գլխուն նկարագրված միջոցառումները ակնհայտ անբավարար են վիճակը շտկելու համար: Մինչդեռ անվիճելի է, որ դատական համակարգը դա այն լոկոմոտիվն է, որը կոռուպցիայի դեմ պայքարում իր ետևից կարող է տանել պետական մյուս մարմիններին:

Կղառնա՞ արդյոք դատական համակարգը պետական մյուս մարմիններում գոյություն ունեցող կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմ, թե ինքը կշարունակի մնալ կոռումպացված և կիսբանի պետական ամբողջ ապարատի կոռուպցիան, կախված է այն բանից, թե ինչ միջոցառումներ կիրականացվեն դատական համակարգը առողջացնելու համար:

Ի՞նչ միջոցառումներ են անհրաժեշտ դատական համակարգի առողջացման համար:

Անցնել նախադեպային իրավունքին, երբ մի որևէ գործով օրինական ուժի մեջ մտած դատական որոշումը պարտադիր կդառնա նմանատիպ մյուս բոլոր գործերով բոլոր դատարանների համար: Դատարանը իր վճիռը կայացնում է հանուն Հայաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության անունից: Հետևապես, չի կարող միևնույն օրենքի պահանջը տարբեր անձանց նկատմամբ կիրառվել տարբեր ձևով, քանի որ դրանով խախտվում է իրավունքի հիմնաքարը՝ օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Հակառակ դեպքում, ինչպես՝ ս կարելի է քաղաքացիների նկատմամբ կիրառել «օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից» հայտնի և անվիճելի սկզբունքը, եթե նույնիսկ դատարանները մի կարծիք չունեն այդ օրենքի մասին և յուրաքանչյուր դատավոր իր ձևով է այն մեկնաբանում:

Նախադեպային իրավունքը կտրականապես կպակասեցնի դատավորի հայեցողության դաշտը, կդարձնի արդարադատությունը ավելի կանխատեսելի, որով զգալիորեն կնվազեցնի կոռուպցիայի դրսևորումները դատարաններում:

Եթե այնուամենայնիվ, օրենսդիր իշխանությունը նպատակահարմար չգտնի նախադեպային իրավունքին անցնելը, ապա պետք է բոլոր դեպքերում ստեղծել որևէ ուրիշ այնպիսի մեխանիզմ, որը բացառի միևնույն օրենքների տարատեսակ մեկնաբանության և կիրառման հնարավորությունը դատարանների կողմից: (Այդպիսի համակարգը, օրինակ, նախկին երաույն դատարանի պլենումն էր: Ներկայիս դատարանների նախաահների խորհուրդը չի կարող իրականացնել այդ ործառույթը, նույնիսկ եթե օրենսդիրը ամրարվի այդ մարմնի կողմից տրված մեկնաբանությունների պարտադիր լինելը, քանի որ այն մարմինը, որն իրավունք է ունենալու տալ պարտադիր բնույթ կրող պարզաբանումներ, պետք է նաև լծակներ ունենա այդ պարզաբանումներին հակասող՝ մինչ այդ կայացված դատական ակտերը բեկանելու համար:)

Անհրաժեշտ է բարձրացնել ինչպես դատավորների, այնպես էլ դատարանների մյուս աշխատակիցների աշխատավարձերը, ապահովել դատավորների կողմից գործի

քննության հետ կապված բոլոր ծախսերի հատուցումը պետական միջոցների հաշվին:

Մատչելի դարձնել քաղաքացիների համար ՀՀ օրենսդրությունը, միջոցներ ձեռնարկել, որպեսզի բոլոր քաղաքացիները իմանան իրենց հիմնական իրավունքները և ազատությունները, դատարանակազմությունը և ունենան գոնե ամենատարրական պատկերացումներ դատարան դիմելու կարգի մասին:

Անհրաժեշտ է ստեղծել ոչ թե անկախ փաստաբանություն, ինչպես դա գրված է Կառավարության ծրագրի մեջ (փաստաբանությունը այսօր լիարժեք անկախ է), այլ՝ ուժեղ փաստաբանություն: Դրա համար անհրաժեշտ է որոշ փոփոխություններ կատարել օրենսդրության մեջ, մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքում, տալով փաստաբաններին ավելի մեծ լիազորություններ, մասնավորապես՝ ապացույցներ հավաքելու և ներկայացնելու հարցում: Անհրաժեշտ է բարձրացնել փաստաբանների մասնագիտական որակը, որի նպատակով պետք է սահմանվեն փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար շատ լուրջ չափանիշներ, իսկ արդեն գործող փաստաբանների համար կազմակերպել մշտական հիմունքներով գործող ուսումնական կենտրոն և որոշակի պարբերականությամբ կատարել նրանց գիտելիքների ստուգումներ:

Գործադիր իշխանությունից դատավորների կախումը վերացնելը կիաջողվի միայն այն դեպքում, երբ փոխվի դատավորի նշանակման, պաշտոնեական առաջխաղացման, լիազորությունների դադարեցման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ Սահմանադրորեն ամրագրված կարգը: Գոյություն ունեցող կարգը բացառում է դատավորի անկախությունը և ստեղծում պարարտ հող կոռուպցիայի համար, ինչի մասին արդեն ասվեց վերևում: Դատավորի նշանակման, առաջխաղացման և լիազորությունների դադարեցման հարցում գործադիր իշխանության դերը պետք է հնարավորինս նվազեցվի:

Հավանաբար, հենց այս նպատակներին հասնելու համար ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու նախագծում առաջարկվել է Սահմանադրության 94 հոդվածում

կատարել որոշակի փոփոխություններ: Ըստ նախագծի, արդարադատության խորհրդի կազմի մեջ պետք է մտնեն ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ մինչև հինգ տարի ժամկետով ընտրված մինչև ինը դատավորներ և Հանրապետության Հախագահի կողմից նշանակված երեք իրավաբան գիտնականներ:

Առաջարկվող տարբերակը, ըստ էության, նվազեցնում է դատավորի կախվածությունը գործադիր իշխանությունից, սակայն մեկ այլ վտանգի աղբյուր կարող է հանդիսանալ. արդյունքում դատավորները կարող են դառնալ մի առանձին կաստա, որտեղ իրենց հարազատներից և մտերիմներից բացի որևէ այլ մեկի մուտքը կդառնա անհնարին կամ՝ չափազանց դժվար: Սա կարող է կոռուպցիայի մի նոր աղբյուր հանդիսանալ:

Կարելի է եզրակացնել, որ ամենալավագույն տարբերակներից մեկը կլիներ դատավորների փակ գաղտնի ընտրությունը տվյալ համայնքի բնակչության կողմից: Այս դեպքում դատավորը կարող է ընտրվել ցմահ, սակայն նրա լիազորությունների դադարեցման համար հիմք հանդիսացող հանգամանքների առկայության դեպքում արդարադատության նախարարությունը իրավունք ունենա հարուցելու կարգապահական վարույթ և, տվյալները ճշտելուց հետո դատավորին հետ կանչելու հարցը ներկայացնել քվեարկության համապատասխան համայնքում:

Այս մեխանիզմը, մի կողմից, հնարավորություն կտա ընտրելու դատավորին իրապես ժողովրդավարական եղանակով, մյուս կողմից, կպահպանի նրա գործունեության վրա վերահսկելու հնարավորությունները՝ չղնելով նրան կախման մեջ:

Ինչ վերաբերվում է քրեական դատավարությունում դատախազությունից դատավորների կախյալ վիճակին, ապա ելքը պետք է փնտրվի երդվյալների դատարանի ստեղծման մեջ: Անհրաժեշտ է նախատեսել, որ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով, ամբաստանյալի ցանկությամբ, դատավարությունն իրականացվի երդվյալների մասնակցությամբ: Գործող Սահմանադրությունը նախատեսում է երդվյալների դատարանի հնարավորությունը, սակայն այդ ինստիտուտը մինչ այժմ չի ստեղծված: Ավելին, Սահմանադրական փոփոխությունների

փաթեթում առաջարկվում է առհասարակ հանել երդվյալների դատարանի մասին դրույթը: Մինչդեռ, ՀՀ Նախագահին առընթեր մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովը, դեռ 2002 թ-ին, քննարկելով արդարացման դատավճիռների բացակայության և դատախազությունից դատարանների կախյալ վիճակի պատճառները, որոշում ընդունեց՝ երկրի ղեկավարության ուշադրությունը հրավիրել Հայաստանում երդվյալների դատարանի անհրաժեշտության վրա: Այդ դրույթը արտացոլվեց նաև Հանձնաժողովի 2002 թ-ի տարեկան զեկույցի մեջ:

Անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել յուրաքանչյուր դատարանի դատավորների միջև գործերի բաշխման պայմանները և կարգը: Այդ նպատակով անհրաժեշտ է լրացումներ կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության, քրեական դատավարության օրենսգրքերում, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում:

**ԳԼՈՒԽ 2. ԿՈՌՈՂՊՑԻՎՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ:
ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ:**

ՀՀ Սահմանադրությունը և քրեական դատավարության օրենսգիրքը չեն նախատեսում կոռուպցիայի դեմ քրեաիրավական ռեպրեսիայի միջոցով պայքարող հատուկ մարմիններ: Օրենսդրությունը նախատեսում է, որ ինչպես և մյուս բոլոր հանցագործությունների, այնպես էլ կոռուպցիայի քրեաիրավական դրսևորումների դեմ պայքարը տարվում է իրավապահ մարմինների կողմից, որոնք են՝ ՀՀ դատախազությունը, ՀՀ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը: Այսպիսով, իրավապահ մարմինների գործունեությունը վճռորոշ դեր ունի կոռուպցիայի դեմ պայքարում:

Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության կողմից 2003 թ-ին Հայաստանում անցկացված ուսումնասիրությունների հաշվետվությունում նշված է, որ տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթերնեշնլ հայաստանյան մասնաճյուղի կողմից անցկացված հարցման

արդյունքների համաձայն, հարցման ենթարկված տնային տնտեսությունների և ձեռներեցների կարծիքով, ՀՀ ոստիկանությունը և գլխավոր դատախազությունը համարվում են ամենակոռուպացված պետական կառույցները: Հարցմանը մասնակցող տնային տնտեսությունների, ձեռներեցների և պետական պաշտոնյաների մեծամասնությունը նշել է իրավապահ մարմինների վատ աշխատանքը:

Հասկանալի է, որ նման պայմաններում կոռուպցիայի դեմ պայքարը դատապարտված է անհաջողության: Անհրաժեշտ են շտապ և արդյունավետ միջոցներ՝ իրավապահ մարմիններում և առաջին հերթին՝ դատախազությունում ու ոստիկանությունում գոյություն ունեցող կոռուպցիայի դրսևորումների դեմ պայքարի համար:

ՀՀ Կառավարության 2003 թ-ի նոյեմբերի 6-ի որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրում իրավապահ մարմինների կողմից կոռուպցիայի դեմ պայքարը ավելի արդյունավետ դարձնելու, ինչպես և հենց իրավապահ մարմիններում կոռուպցիայի դրսևորումները վերացնելու նպատակով առաջարկվել են հետևյալ միջոցառումները.

- իրավապահ մարմիններում իրականացնել կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումներ,
- բարելավել իրավապահ մարմինների նյութատեխնիկական զինվածության մակարդակը, ներդնել տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ,
- իրավապահ մարմինների աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով կազմակերպել մշտական գործող դասընթացներ՝ կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման և քննության առանձնահատկությունների վերաբերյալ:
- իրավապահ մարմինների աշխատողների կողմից ծառայողական պարտականությունները կատարելու, պաշտոնեական լիազորություններն անցնելու, ծառայության հետ կապված սահմանափակումները կանոնակարգելու

նպատակով մշակել իրավապահ մարմինների աշխատակիցների վարքագծի կանոններ:

Բացի վերը նշվածից, ծրագրում կարևորվում է իրավապահ մարմինների ծառայողների վարձատրության և սոցիալական ապահովության բարձրացումը, ինչպես նաև՝ «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» օրենքի ընդունումը:

Վերը նշված բոլոր միջոցառումները, իհարկե, կարևոր են և միգուցե ինչ-որ չափով կարող են բարելավել իրավիճակը, սակայն այդ միջոցառումները չի կարելի համարել բավարար՝ դրված նպատակներին հասնելու համար:

Իրավապահ մարմինների միջև գոյություն չունի գործառնությունների հստակ տարանջատում այն հարցում, թե ո՞ր իրավապահ մարմինը ո՞ր գործերով է իրավասու հարուցել և իրականացնել քրեական հետապնդում: Այսպես.

ՀՀ Սահմանադրության 103 հոդվածին համապատասխան, Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական կենտրոնացված մարմին է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը: Դատախազությունը՝

1. օրենքով նախատեսված դեպքերում և կարող հարուցում է քրեական հետապնդում.
2. հսկողություն է իրականացնում նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ.
3. դատարանում պաշտպանում է մեղադրանքը.
4. պետական շահերի պաշտպանության հայց է ներկայացնում դատարան.
5. բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.
6. հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման նկատմամբ:

Ինչպես կարելի է նկատել, նախաքննության իրականացումը չի մտնում դատախազության իրավասության մեջ: Այլ կերպ ասած, քրեական գործերով դատախազությունը կարող է հարուցել քրեական հետապնդում, նախաքննության ընթացքում հսկողություն իրականացնել նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանել մեղադրանքը, սակայն Սահմանադրությունը չի նախատեսում, որ դատախազությունը ինքը կարող է ինքնուրույն իրականացնել նախաքննությունը: Կարելի է ասել, որ այս մեխանիզմը Սահմանադրությամբ ամրագրվել է այն

նպատակով, որպեսզի տարանջատվեն դատախազության և քննչական մարմինների լիազորությունները և այդպիսով ստեղծվի փոխադարձ վերահսկողության մեխանիզմ, որը հնարավորինս կփոքրացնի քրեական գործերի քննության ընթացքում չարաշահումների հնարավորությունը:

Սակայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 189 հոդվածում ասված է, որ քրեական գործերով նախաքննությունը կատարում են դատախազության քննիչները, ոստիկանության և ազգային անվտանգության քննիչները:

Քրեական դատավարության օրենսգրքի այս դրույթը ակնհայտորեն հակասում է Սահմանադրությանը և մեծ չարաշահումների հնարավորություն է բացում դատախազության առջև: Դատախազությունը նման պայմաններում քրեական գործերի նախաքննության ընթացքում դառնում է անվերահսկելի, քանի որ մինչդեռ տական ողջ վարույթը դառնում է դատախազության մենաշնորհը: Այս պարագաներում դատախազությունը ինքն է հարուցում քրեական գործը, ինքն է իրականացնում նախաքննությունը, ինքն է հսկողություն իրականացնում նախաքննության նկատմամբ, ինքն է հաստատում մեղադրական եզրակացությունը: Հասկանալի է, որ նման դեպքում դատախազությունում խիստ աճում են կոռուպցիայի հնարավորությունները և պատահական չէ, որ այդ կառույցը հարցման ընթացքում նվաճել է ամենակոռումպացված կառույցներից մեկի կոչումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190 հոդվածի 1-ին մասը իր հերթին, հակասելով ՀՀ Սահմանադրությանը, նախատեսում է քրեական օրենսգրքի այն հոդվածները, որոնցով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննությունը իրականացնում են դատախազության քննիչները: Նույն հոդվածի 2-րդ մասում ասված է, որ քրեական օրենսգրքի մյուս բոլոր հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննությունն իրականացնում են ոստիկանության և ազգային անվտանգության մարմինների քննիչները: Կարծես թե զոհե այս հոդվածը ինչ-որ չափով տարանջատում է իրավապահ մարմինների լիազորությունները նախաքննության փուլում: Սակայն գործնականում դատախազությունը խախտում է նաև օրենքի այս պահանջը և նախաքննություն է իրականացնում

այնպիսի հողվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով, որոնք նույնիսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերը նշված հողվածին համապատասխան, դատախազության քննիչների իրավասությունից դուրս են: Այդպիսի գործերը դատախազների կամայական որոշումների հիման վրա փոխանցվում են դատախազության քննիչներին, շատ ժամանակ նույնիսկ առանց համապատասխան գրավոր որոշման:

Ընդ որում, եթե ուսումնասիրվի, թե ոստիկանության ու ազգային անվտանգության քննչական ենթակայությանը պատկանող որ քրեական գործերն են նախաքննության ընթացքում ավելի հաճախ քննվում դատախազության քննիչների կողմից, ապա կպարզվի, որ դրանք խոշոր և առանձնապես խոշոր չափերի յուրացումների և խարդախությունների վերաբերյալ քրեական գործերն են, այսինքն այն գործերը, որոնցում նախաքննությունն իրականացնող նարմինը ավելի մեծ հավանականությամբ կարող է «ձեռքերը տաքացնել»:

Այն, որ դատախազությունը այսօր միաժամանակ և նախաքննություն է իրականացնում և հսկողություն է իրականացնում նախաքննության օրինականության նկատմամբ, բերում է նաև այլ կոռուպցիոն ռիսկերի՝ բացակայում են դատախազության ներսում, և հատկապես՝ դատախազության բարձրագույն ատյաններում գոյություն ունեցող կոռուպցիայի դեմ պայքարի որևէ լուրջ մեխանիզմներ, ինչը անպատժելիության մթնոլորտ է ստեղծում այդ խավի մոտ և գեներացնում կոռուպցիան ոչ միայն դատախազության համակարգում, այլ, որպես դրա հետևանք, նաև մյուս ոլորտներում:

Ազգային ժողովի ներկայացված սահմանադրական փոփոխությունների նախագծերի փաթեթներում առաջարկվում է Սահմանադրության 103 հոդվածում ավելացնել կետ, որով սահմանվի, որ ՀՀ դատախազությունը նաև իրականացնում է քրեական հետապնդում: Այս դեպքում, արդեն սահմանադրորեն, կարող է ամրապնդվել գոյություն ունեցող այն իրավիճակը, երբ դատախազությունում գոյություն ունեցող կոռուպցիայի դեմ պայքարը կախված է միայն դատախազությունից, հետևապես՝ անարդյունավետ է:

Այսպիսով, իրավապահ մարմինների ներսում գոյություն ունեցող կոռուպցիայի դրսևորումների դեմ պայքարում կարևոր դեր կարող է խաղալ դրանց իրավասությունների հստակ տարանջատումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որոշ դրույթներ հնարավորություն են տալիս դատախազությանը գործելու կամայականորեն, ինչը կոռուպցիոն վտանգներ է պարունակում: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37 հոդվածը նախատեսում է, որ դատախազի որոշմամբ քրեական գործ կարող է չհարուցվել և քրեական հետապնդում կարող է չիրականացվել անձին քրեական պատասխանատվությունից ազատելու՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայությամբ, կապված՝

1. գործուն գղջալու հետ.
2. իրադրության փոփոխման հետ.
3. ոչ մեծ ծանրության հանցագործությունից տուժած անձի համաձայնության հիման վրա կայացված դատախազի որոշմամբ, եթե դատախազը գտնի, որ պատճառված վնասը հարթած կասկածյալը կամ մեղադրյալը ընդունակ են ուղղվելու՝ առանց նրա նկատմամբ պատիժ կիրառելու:

Բացի այդ, նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ դատախազի որոշմամբ քրեական հետապնդում կարող է չիրականացվել, եթե նա դրա իրականացումը գտնի ոչ նպատակահարմար, ի նկատի ունենալով՝

1. անձի կատարած արարքի հետևանքով ոչ էական վնաս պատճառելը.
2. կատարվածի քավումը տուժողի միջոցներով, իրավունքի սահմանափակումներով, այլ զրկանքներով, որն անձը կրել է իր կատարած արարքի կապակցությամբ.
3. որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի անբուժելի, ծանր հիվանդությունը:

Ինչպես տեսնում ենք, հոդվածը չի սահմանում հստակ չափանիշներ, թողնելով հարցի լուծումը դատախազի հայեցողությանը: Ընդ որում, հոդվածում նշված իրավիճակներում քրեական գործի կարճումը դա ոչ թե դատախազի պարտականությունն է, այլ իրավունքը, որից նա կարող է մի դեպքում (ունենալով անձնական

շահագրգռվածություն) օգտվել, իսկ մյուսում (անձնական շահագրգռվածության բացակայության դեպքում)՝ ոչ: Այսպիսով, քրեական դատավարության օրենսգրքի այս հոդվածը կոռուպցիայի հնարավորություններ է թողնում դատախազի համար:

Այս հոդվածում նշված իրավիճակներում օրենքը նախաքննության և հետաքննության փուլում դատախազին, փաստորեն, տալիս է դատարանի լիազորություններ: Ավելին, հոդվածի 3-րդ մասում ասված է, որ եթե մեղադրող դատախազը դատարանում հայտնաբերում է այդ նույն հիմքերը, ապա նա իրավասու է հայտարարել ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին: Իսկ նույն օրենսգրքի 35 հոդվածի 4-րդ մասի համապատասխան, ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին մեղադրողի հայտարարությունը դատարանի համար քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք է: Հետևապես, դատախազությունը, նման հիմքերով գործերը կարճելուց կամ մեղադրանքից հրաժարվելուց, դուրս է մնում անգամ դատական վերահսկողության ոլորտից, ինչը լուրջ չարաշահումների և կոռուպցիայի համար պարարտ հող է հանդիսանում:

Նույն չարաշահումների և կոռուպցիայի դրսևորումների համար դաշտ են բացում ՀՀ քրեական օրենսգրքի 72-74 հոդվածները, որոնցում նույնպես անձին քրեական պատասխանատվությունից ազատելը որոշակի պայմաններում թողնված է դատարանների և իրավապահ մարմինների հայեցողությանը: Այսպես, 72 հոդվածում ասված է, որ առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը **կարող է** ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հանցանք կատարելուց հետո կանոնները ներկայացել է մեղայականով, աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությանը պատճառված վնասը: 73 հոդվածը նախատեսում է, որ ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը **կարող է** ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառված վնասը: 74 հոդվածը նախատեսում է, որ առաջին անգամ ոչ մեծ կամ

միջին ժամրության հանցանք կատարած անձը **կարող է** ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե պարզվի, որ իրադրության փոփոխման հետևանքով այդ անձը կամ նրա կատարած արարքը դադարել են հանրության համար վտանգավոր լինելուց:

Այսպիսով, օրենքը հստակ սահմանում է որոշակի չափանիշներ, սակայն նշում է, որ այդպիսի չափանիշների առկայությամբ անձը ոչ թե ազատվում է, այլ՝ **կարող է** ազատվել քրեական պատասխանատվությունից, հարցի լուծումը թողնելով դատախազությանը (եթե գործը գտնվում է նախաքննության կամ հետաքննության փուլում), կամ՝ դատարաններին: Այսպիսով, օրենքը սկզբունքորեն չի բացառում, որ ոչ մեծ ժամրության հանցանք կատարած անձը հաշտված լինի տուժողի հետ և հատուցած լինի պատճառված վնասը, սակայն դատախազության կամ դատարանների կողմից չազատվի քրեական պատասխանատվությունից, մինչդեռ նույն վիճակում գտնվող մեկ ուրիշ անձ ազատվի: Դրանով օրենքը կամայականությունների մեծ հնարավորություններ է տալիս ինչպես իրավապահ մարմիններին, այնպես էլ դատարաններին և կոռուպցիա ծնող լուրջ մեխանիզմ է ստեղծում:

Դատախազությունում և իրավապահ մյուս մարմիններում կոռուպցիայի ամենամեծ խթաններից է դատական համակարգի այսօրվա կախյալ և կոռումպացված վիճակը: Քաղաքացիները քաջ գիտակցում են, որ դատարանները կախյալ վիճակում են գտնվում դատախազությունից, ոստիկանությունից և ազգային անվտանգության ծառայությունից: Բոլորը լավ գիտեն, որ ՀՀ-ում դատարանները չեն կայացնում արդարացման դատավճիռներ և որ քրեական գործի ելքը կախված է դատախազության դիրքորոշումից: Շատ քչերներ են հավատում, որ քրեական գործերով դատարաններում հնարավոր է հասնել արդարության, եթե անմեղ մարդուն մեղադրանք է առաջադրված: Այդ պատճառով մարդկանց գերակշռող մեծամասնությունը, հայտնվելով իրավապահ մարմիններում, անկախ այն բանից, մեղավոր են իրենք թե ոչ, անմիջապես փորձում են «լեզու գտնել» հետաքննիչների, քննիչների և դատախազների հետ:

Կոռուպցիայի ծաղկմանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ իրավապահ մարմինները հանդիսանում են շատ փակ կառույցներ: Ընդ որում, հանրությունից գաղտնի են

պահվում ինչպես այն տեղեկությունները, որոնց գաղտնիությունը նախատեսված է օրենքով (օպերատիվ-հետախուզական աշխատանքը, նախաքննության տվյալները և այլն), այնպես էլ շատ տեղեկություններ, որոնք օրենքով գաղտնի չեն: Նման իրավիճակը իրավապահ մարմիններին դուրս է թողնում հանրության վերահսկողության ոլորտից, ինչը դժվարեցնում է այդ կառույցներում կոռուպցիայի դրսևորումների բացահայտումը և դրա դեմ պայքարը:

Կոռուպցիայի համար բարենպաստ պայմաններ է ստեղծում իրավապահ մարմինների կոշտ կախվածությունը գործադիր իշխանությունից, ինչը հնարավորություն է տալիս օգտագործելու այդ կառույցները անձնական նպատակներով՝ քաղաքական պայքարում հաջողության հասնելու համար: Ընդ որում, եթե նախկինում ոստիկանությունը և ազգային անվտանգությունը նախարարությունների կարգավիճակով հաշվետու էին օրենսդիր իշխանության առջև՝ վստահության ձայնի մեխանիզմի և ԱԺ պատգամավորների կողմից նախարարներին ուղղված պարբերական հարցադրումներին պատասխանելու միջոցով, ապա ներկայումս այդ կառույցները կարգավիճակը փոխվելու և դրանց «ծառայությունների» կարգավիճակ տրվելու արդյունքում դրանք դուրս են եկել օրենսդիր իշխանության վերահսկողության ոլորտից:

ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 9 կետին համապատասխան, գլխավոր դատախազին նշանակում է Նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ, իսկ նույն հոդվածի 11 կետին համապատասխան, Նախագահը միանձնյա նշանակում է նաև գլխավոր դատախազի տեղակալներին և դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները գլխավորող դատախազներին, ինչպես նաև՝ ազատում է իր կողմից նշանակված դատախազներին: «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածով նախատեսված է, որ ՀՀ ոստիկանության պետին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ, ոստիկանության պետի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է նույնպես ՀՀ Նախագահը՝ ոստիկանության պետի առաջարկությամբ: «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածին համապատասխան, ազգային անվտանգության ծառայության ղեկավարին պաշտոնի

նշանակում և ազատում է ՀՀ Նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ: Ղեկավարի տեղակալներին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը:

Այստեղ հարկ է նշել, որ «Ոստիկանությունում ծառայության մասին» և «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքներում ինչ որ չափով սահմանափակված են ՀՀ Նախագահի լիազորությունները՝ ոստիկանապետին, նրա տեղակալներին, ինչպես նաև ԱԱԾ պետին և նրա տեղակալին և բարձրաստիճան մի շարք պաշտոնյաներին իրենց պաշտոններում նշանակելու հարցում: Այսպես, «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածին համապատասխան, ոստիկանապետի պաշտոնում կարող է նշանակվել ոստիկանության բարձրագույն պաշտոն զբաղեցնողը՝ նախկին պետի տեղակալներից մեկը (ներառյալ ոստիկանության գործերի հրամանատարը) կամ ոստիկանության գլխավոր խմբի որևէ պաշտոն զբաղեցնող այն անձը (ոստիկանության վարչության պետ, վարչության պետի տեղակալ կամ բաժնի պետ), որը նշանակումից առաջ առնվազն երեք տարի ծառայել է այդ պաշտոնում: Բացի այդ, պաշտոնում նշանակվող անձը պետք է ունենա ոստիկանության գնդապետից ոչ ցածր ոստիկանության կոչում: Համանման պահանջներ են ներկայացվում նաև ոստիկանապետի տեղակալի համար, այն տարբերությամբ, որ ոստիկանապետի տեղակալ կարող է նշանակվել ոստիկանության այն ծառայողը, որը ունի ոստիկանության փոխգնդապետից ոչ ցածր ոստիկանության կոչում: «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածի 1-ին կետին համապատասխան, ազգային անվտանգության ծառայության ղեկավար կարող է նշանակվել այն ծառայողը, ով մինչև նշանակումը զբաղեցրել է ազգային անվտանգության մարմինների ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն, կամ՝ վերջին երեք տարին զբաղեցրել է գլխավոր խմբի պաշտոն և ունի գնդապետից ոչ ցածր կոչում (Բարձրագույն խմբի պաշտոն համարվում է ԱԱԾ ղեկավարի, տեղակալի և պետպահպանության ծառայության պետի պաշտոնները, իսկ գլխավոր խմբի պաշտոն՝ ԱԱԾ ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների պետերի և տեղակալների պաշտոնները): Ինչ վերաբերում է դատախազությանը, ապա «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածը

սահմանում է, որ գլխավոր դատախազի տեղակալները և գլխավոր դատախազության տարածքային ստորաբաժանումների դատախազները պետք է ունենան բարձրագույն իրավաբանական կրթություն և իրավաբանի առնվազն հինգ տարվա մասնագիտական ստաժ: Ընդ որում, ՀՀ գլխավոր դատախազի համար օրենքը նման չափանիշներ չի սահմանում:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 95 հոդվածի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերին համապատասխան, արդարադատության խորհուրդն է ՀՀ գլխավոր դատախազի առաջարկով կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանը ներկայացնում դատախազների պաշտոնեական պիտանելիության և ծառայողական առաջխաղացման ամենամյա ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները, եզրակացություն տալիս գլխավոր դատախազի տեղակալների և դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները գլխավորող դատախազների թեկնածությունների վերաբերյալ, առաջարկ ներկայացնում դատախազներին որակավորման դասեր շնորհելու մասին: Այս մեխանիզմը նույնպես ինչ որ չափով սահմանափակում է Հանրապետության Նախագահի լիազորությունները՝ դատախազությունում նշանակումներ կատարելու հարցում:

Քրեական դատավարության ընթացքում կոռուպցիոն ռիսկերի լուրջ փուլ է հանդիսանում հետաքննության փուլը, երբ լուծվում է քրեական գործ հարուցելու կամ չհարուցելու հարցը: Այս փուլում իրավապահ մարմինների համար հաճախակի հնարավորություն է ստեղծվում չհարուցել քրեական գործ, ինչը երբեմն օգտագործվում է հանցանքը կատարած անձանց կողմից: Վերջիններս փորձ են կատարում, հետաքննությունն իրականացնող անձանց կաշառելու կամ այլ ձևով շահագրգռելու միջոցով «լեզու գտնելով» հասնելու նրան, որպեսզի քրեական գործ չհարուցվի:

Նախաքննության փուլը իր հերթին լայն հնարավորություն է տալիս իրավապահ մարմիններին, և հատկապես դատախազությանը, քրեական գործը կարճելու համար, ինչը նույնպես ճանապարհ է բացում կոռուպցիայի տարբեր դրսևորումների համար:

Այս տեսանկյունից չափազանց կարևոր մեխանիզմ է հանդիսանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39

գլուխը, որը սահմանում է դատական վերահսկողություն մինչդատական վարույթի (հետաքննություն և նախաքննություն) նկատմամբ: Դատական բարեփոխումների շրջանակում այս գլխով նախատեսված դրույթները, հավանաբար, ամենակարևորներից էին քրեական դատավարության օրենսգրքում: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածը նախատեսում է, որ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումները և գործողությունները կարող են բողոքարկվել դատարան: Այդպիսի բողոքներ կարող են ներկայացնել կասկածյալը, մեղադրյալը, պաշտպանը, տուժողը, քրեական դատավարության մասնակիցները, այլ անձինք, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից: Վերը նշված անձինք իրավունք ունեն դատարան բողոքարկել նաև հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներ ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում: Բողոքը ճանաչելով հիմնավորված, դատարանը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին:

Նույն օրենսգրքի 185 հոդվածը հնարավորություն է տալիս նախաքննության փուլում քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը բողոքարկել վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանի կողմից բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը:

Ինչպես կարելի է հանգզվել, անկախ և չկոռումպացված դատական համակարգ ունենալու դեպքում, դատական վերահսկողությունը կարող է արդյունավետ միջոց հանդիսանալ հետաքննության և նախաքննության ընթացքում իրավապահ մարմիններում կոռուպցիայի դեմ պայքարի հարցում: Սակայն վերը նկարագրված վերահսկողության մեխանիզմները առայժմ

արդյունավետ չեն գործում, քանի որ, ինչպես արդեն ասվել է, դատարանները խիստ կախվածության մեջ են գտնվում դատախազությունից, ինչպես նաև՝ իրավապահ մարմիններից ոչ պակաս (եթե չասենք՝ ոչ ավել) են կոռումպացված:

Բացի այդ, դատական վերահսկողության մեխանիզմները կարող են աշխատել միայն այն դեպքում, եթե կա շահագրգիռ անձ (տուժողը, հանցագործության վերաբերյալ հաղորդում տված անձը), որը կբողոքարկի այդ որոշումները (գործողությունները) դատարան: Սակայն, ինչպես հայտնի է, կան բազմաթիվ հանցագործություններ, որոնցում չկան տուժողներ, կամ տուժողը պետությունն է, որի շահերը պետք է ներկայացնի դատախազությունը: Այս դեպքերում հանցագործությունները չգրանցելը, քրեական գործերով վարույթները կարճելը, հանցագործությունները այլ եղանակներով պարտակելու փաստերը, մյուս չարաշահումները չեն կարող դառնալ դատական քննության առարկա, ինչը իր մեջ մեծ կոռուպցիոն ռիսկեր է պարունակում:

**ԳԼՈՒԽ 3. ԿՈՌՈՒՊՏԻԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՎԻՐՎԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ: ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ:**

Անդրադառնելով քաղաքացիական և տնտեսական իրավահարաբերությունները կարգավորող օրենքներին, պետք է նշել, որ դրանցում նույնպես հանդիպում են պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից ընդունված նորմեր, որոնք, որպես կանոն, աչքի են ընկնում իրենց անհստակ և անտրամաբանական ձևակերպումներով: Ընդ որում, հիմքեր կան ասելու, որ օրենքներում նմանօրինակ նորմեր են ընդունվում հատուկ կամայական վերաբերմունքի հնարավորություններ ստեղծելու նպատակով, որպիսի հանգամանքն էլ պարարտ հող է հանդիսանում կոռուպցիայի զարգացման համար:

Մասնավորեցման գործընթացները իրեն մեջ չափազանց մեծ կոռուպցիոն ռիսկեր են պարունակում, որոնց նվազեցման համար անհրաժեշտ է նախ և առաջ ապահովել մասնավորեցման գործարքների թափանցիկությունը: Կառավարության որոշմամբ առաջարկվում է ներդնել

մասնավորեցման նոր մեխանիզմներ՝ այսպես կոչված «մասնավորեցման խանութի» միջոցով: Առաջարկվում է նաև պետական գույքի օտարումները կազմակերպել հիմնականում աճուրդների և մրցույթների միջոցով, մասնավորեցման գործընթացներին ներգրավելով նաև տվյալ ոլորտի մասնագիտական միութիւնները:

Այս կապակցությամբ մի պրակտիկ օրինակի լույսի ներքո դիտարկենք »Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին« ԶԳ օրենքի 18 հոդվածի 1-ին կետի 4-րդ պարբերությունը, որի համաձայն պետական գույքը ուղղակի վաճառքի ձևով կարող է մասնավորեցվել »հավանական գնորդին, եթե այն նախօրոք հայտնի է«: Այսպես, 2004թ. հունվար ամսից »Պարեն ԳԱՆ« ՊԲԲ-ի աշխատավորական կոլեկտիվը դիմել էր ԶԳ Նախագահին, ԶԳ Վարչապետին, ԶԳ Ազգային ժողովի նախագահին, խնդրելով »Պարեն ԳԱՆ« ՊԲԲ-ն հանել մասնավորեցման ենթակա պետական գույքի ցանկից, կամ դրա բաժնետոմսերը ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցնել իրենց: Նշենք, որ այս կապակցությամբ 05.02.2004թ. հրավիրել էր »Պարեն ԳԱՆ« ՊԲԲ-ի՝ 54 հոգուց բաղկացած աշխատավորական կոլեկտիվի ընդհանուր ժողով, որի արդյունքում որոշվել էր առաջարկել »Պարեն ԳԱՆ« ՊԲԲ-ն մասնավորեցնել ընկերության աշխատավորական կոլեկտիվին ուղղակի վաճառքի ձևով, ինչպես նաև խնդրել ԶԳ գյուղատնտեսության նախարարությանը՝ այս առթիվ սահմանված կարգով համապատասխան հայտ ներկայացնել ԶԳ Կառավարություն: Նշված արձանագրության օրինակները ուղարկվել էին ինչպես ԶԳ Ազգային ժողով, այնպես էլ ԶԳ Կառավարություն:

ԶԳ գյուղատնտեսության նախարարն իր հերթին 07.05.2004թ. թիվ 07-ՂԼ-03.1243 գրությամբ դիմել էր ԶԳ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետին՝ խնդրելով հաշվի առնել մասնավորեցման ենթակա ընկերության աշխատավորական կոլեկտիվի գիտական ներուժն ու երկարամյա աշխատանքային փորձը և մասնավորեցման ժամանակ նրան տալ առավելություն մասնավորեցման այլ հնարավոր սուբյեկտների նկատմամբ:

Ի պատասխան վերը նշված դիմումների, ԶԳ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետն իր 07.07.2004թ. թիվ 02-2-838/15 գրությամբ »Պարեն ԳԱՆ« ՊԲԲ-ի

աշխատավորական կոլեկտիվին հայտնել էր, որ ՀՀ Կառավարության կողմից ընդունվել և ՀՀ Նախագահի վավերացմանն է ներկայացվել «Պարեն ԳԱՆ» ՊՓԲԸ-ի բաժնետոմսերի մրցույթով մասնավորեցման մասին որոշում և, որ ընկերության աշխատավորական կոլեկտիվը կարող է մասնակցել նշված մրցույթին:

Հետագայում պարզվել է, որ դեռևս մինչև ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետի վերը նշված գրությունը՝ 10.06.2004թ. ընդունվել է ՀՀ Կառավարության թիվ 1334-Ն որոշումը, որի համաձայն, »Պարեն ԳԱՆ« ՊՓԲԸ-ի բաժնետոմսերը ուղղակի վաճառքի ձևով, 45176 հազ. դրամ գումարով պետք է վաճառվի »նախօրոք հայտնի գնորդ« Ալբերտ Խաչատրյանին:

ՀՀ Կառավարության 10.06.2004թ. թիվ 1334-Ն որոշումը 08.10.2004թ. վավերացվել է ՀՀ Նախագահի կողմից:

Վերը նկարագրված իրավիճակում ակնհայտ է, որ «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի 1-ին կետի 4-րդ պարբերությունը հակասում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին արձանագրության 1-ին հոդվածին, որը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով»:

Այսպես, «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 1-ին կետի համաձայն, «Պարեն ԳԱՆ» ՊՓԲԸ-ի աշխատավորական կոլեկտիվը հանդիսանում է մասնավորեցման սուբյեկտ, այսինքն՝ օրենքի ուժով օժտված է մասնավորեցվող ընկերության բաժնետոմսերը սեփականության իրավունքով ձեռք բերելու ողջամիտ հնարավորությամբ: Ընկերության աշխատավորական կոլեկտիվի այդ իրավունքն ամրագրված է նաև նույն օրենքի 18 հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությամբ, երբ մասնավորեցումն իրականացվում է ուղղակի վաճառքի ձևով:

Մասնավորեցվող ընկերության բաժնետոմսերը սեփականության իրավունքով ձեռք բերելու՝ ընկերության աշխատավորական կոլեկտիվի օրենքով ամրագրված իրավունքը, որպես նյութական ակտիվ, մտնում է Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով սահմանված գույք հասկացության մեջ, ուստիև ենթակա է պաշտպանության Կոնվենցիայի նշված հոդվածի շրջանակներում:

Այսպես, մի շարք գործերով, մասնավորապես՝ «Պրեսսոս Կոնպանիա Նավիերա բաժնետիրական ընկերություն» և մյուսներն ընդդեմ Բելգիայի (Pressos Compania Naviera S.A. & others v. Belgium) և «Պան Վելլի Դեվելոպմենտս» ՍՊԸ Կոնպանիա ընդդեմ Իռլանդիայի (Compania Pajon Velli Developments Ltd v. Irland) գործերով, Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը, պարզաբանելով Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով գույք հասկացությունը, նշել է, որ նախևառաջ, այն կրում է ինքնավար բնույթ, այսինքն՝ կախված չէ նրանից, թե ինչպես է համապատասխան պետության ներքին օրենսդրությունը որոշում, թե ինչը կարող է համարվել սեփականության իրավունք կամ գույքից օգտվելու իրավունք: Դրան համապատասխան, Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը նշել է, որ օրենքի հիման վրա գույք կամ դրա նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու ողջամիտ ակնկալիքը կամ որոշակի հանգամանքների վրա հասնելուն իրավաչափ սպասումը կազմում է ակտիվ, հետևապես և համապատասխանում է Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով սահմանված գույք հասկացությանը:

Տվյալ իրավիճակում, աշխատավորական կոլեկտիվը զրկվել էր իր վերը նշված իրավունքից, քանի որ «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի 1-ին կետի 4-րդ պարբերությունը սահմանել է պետական գույքը հավանական գնորդին, եթե այն նախօրոք հայտնի է ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցնելու հնարավորություն: Ընդ որում, նշված օրենքը որևէ կերպ չի սահմանել հավանական և նախօրոք հայտնի գնորդի, որպես մասնավորեցման սուբյեկտի, որոշման չափանիշները, ինչպես նաև դրա հարաբերակցությունը մասնավորեցման մյուս սուբյեկտների նկատմամբ և պետական գույքը մասնավորեցնելիս նրան վերապահվող նախապատվության

իրավունքը, եթե նման իրավունք առհասարակ ենթադրվում է նույն օրենքի, հատկապես դրա 18 հոդվածի բովանդակությունից:

Հատկանշական է, որ հավանական գնորդը, եթե այն նախօրոք հայտնի է, որպես մասնավորեցման սուբյեկտ, նախատեսված չէ Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին ՀՀ օրենքի ընդհանուր դրույթներում և դրա մասին որևէ նշում չկա օրենքի 5 հոդվածում, որը սահմանում է, թե ովքեր են հանդիսանում մասնավորեցման սուբյեկտներ:

Օրենքից պարզ չէ, թե ինչի շնորհիվ է տվյալ գնորդը, ի տարբերություն մյուս գնորդների հավանական և նախօրոք հայտնի և, ինչու մյուս գնորդները հավանական և նախորոք հայտնի չեն:

Ինչպես արդեն նշվեց, օրենքի ոչ պարզ և հստակ լինելը հնարավոր է դարձրել մասնավորեցվող ընկերության աշխատավորական կոլեկտիվին զրկելու ուղղակի վաճառքի ձևով ընկերության բաժնետոմսերը ձեռք բերելու իրավունքից, քանզի 10.06.2004թ. ընդունվել է ՀՀ Կառավարության թիվ 1334-Ն որոշումը, որի համաձայն, «Պարեն ԳԱՆ» ՊՓԲԸ-ի բաժնետոմսերը ուղղակի վաճառքի ձևով որոշվել է վաճառել նախօրոք հայտնի գնորդ Ալբերտ Խաչատրյանին:

Միջամտությունը Կոնվենցիայով երաշխավորված որևէ իրավունքի անարգել իրականացմանը համարվում է ոչ իրավաչափ, եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին:

Այսպես, Լիտգոուն ընդդեմ Միացյալ Թագավորության (Litgow v. UK) և Վինտերվերպան ընդդեմ Նիդերլանդների (Vinterwerp v. Netherlands) գործերով Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը արձանագրել է, որ իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանելու համար անհրաժեշտ է, որպեսզի պետության (պետական իշխանության մարմնի) գործողությունները համապատասխանեն համարժեքորեն հասանելի և բավարար հստակ ձևակերպված իրավական նորմերին, որոնք պետք է համապատասխանեն իրավունքի կոնցեպցիայի էական պահանջներին: Դա ոչ միայն նշանակում է, որ գանգատարկվող միջամտությունը սեփականության իրավունքի մեջ պետք է ընդամենը հիմնաված լինի ներպետական օրենսդրության որևէ մի դրույթի վրա, այլ

նաև այն, որ պետք է լինի արդարացի և պատշաճ կարգ, այն է՝ վիճարկվող միջոցը պետք է սահմանված լինի և ի կատար ածվի իշխանության պատշաճ մարմնի կողմից և չլինի կամայական:

Տվյալ դեպքում, ՀՀ Կառավարության միջամտությունը աշխատավորական կոլեկտիվի անդամների՝ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավունքի անարգել իրականացմանը եղել է կամայական, քանզի հիմնված է եղել այնպիսի օրենքի վրա, որը բավարար պարզ և կանխատեսելի չէ (տես *mutadis mutandis* Մարդու իրավունքների եվրոպական Դատարանի մեկնաբանությունները Սպաչեկն ընդդեմ Չեխիայի Հանրապետության (*Spachek v. Chekh Republic*) և Հենտրիխն ընդդեմ Ֆրանսիայի (*Hentrikh v. France*) գործերով):

Այն, որ աշխատավորական կոլեկտիվի անդամների նկատմամբ տեղի է ունեցել կամայականություն, հաստատվում է նաև նրանով, որ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետն իր 07.07.2004թ. թիվ 02-2-838/15 գրությամբ «Պարեն զԱՆ» ՊՓԲԸ-ի նրանց հավաստել էր, որ «Պարեն զԱՆ» ՊՓԲԸ-ի բաժնետոմսերի մասնավորեցմունն իրականացվելու է մրցույթի ձևով և, որ ընկերության աշխատավորական կոլեկտիվը կարող է մասնակցել նշված մրցույթին, այն դեպքում, երբ մինչ այդ արդեն իսկ որոշված է եղել մասնավորեցումն իրականացնել ուղղակի վաճառքի ձևով՝ նախօրոք հայտնի գնորդ Ա.Խաչատրյանին:

Այսպիսով, «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի 1-ին կետը հավանական գնորդ, եթե այն նախօրոք հայտնի է հասկացության մասով հակասում է Կոնվենցիայի պահանջներին և խախտում է օրենքի նույն հոդվածով մասնավորեցվող կազմակերպության աշխատավորական կոլեկտիվին երաշխավորված՝ մասնավորեցմանը մասնակցելու և բաժնետոմսերը ուղղակի վաճառքի ձևով ձեռք բերելու իրավունքից:

Ինչպես արդեն նշվեց, վերը նշված իրավիճակը եզակի չէ...

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային ոչ կառավարական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից անցկացված հարցման արդյունքների համաձայն, տնային տնտեսությունների 56 տոկոսը, գործարարների 49 տոկոսը և պետական պաշտոնյաների 43,5

տոկոսը գտնում են, որ ՀՀ Նախագահի, ՀՀ վարչապետի աշխատակազմերը, ինպես նաև նախարարությունները և գործադիր իշխանության այլ մարմինները կոռուպացված են: Ընդ որում, հարցվողների բոլոր խմբերում որպես առավել կոռուպացված կառույցներ նշվել են նախարարությունները: Հարցման մասնակիցների ճնշող մեծամասնությունը գտնում է, որ կոռուպցիայի տարածմանը Հայաստանում առաջին հերթին նպաստում են պետական պաշտոնյաները:

ՀՀ կառավարության 2003 թ-ի նոյեմբերի 6-ի որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրում գործադիր իշխանության մարմիններում կոռուպցիայի դեմ պայքարի հարցում առանձնակի կարևորություն է տրվում «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքին: Օրենքը իրոք ուղղված է կանխարգելելու կոռուպցիայի այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են քաղաքացիական ծառայողներին աշխատանքի ընդունելուց, նրանց պաշտոնական առաջխաղացման հարցը լուծելուց և աշխատանքից ազատելուց ոչ օբյեկտիվ և շահագրգիռ որոշումների ընդունումը:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան, օրենքի գործողությունը տարածվում է հետևյալ մարմիններում քաղաքացիական պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա.

- ՀՀ Նախագահի աշխատակազմ,
- ՀՀ կառավարության աշխատակազմ,
- ՀՀ հանրապետական գործադիր մարմինների աշխատակազմեր,
- ՀՀ մարզպետարանների (երևանի քաղաքապետարանի) աշխատակազմեր,
- ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող հանձնաժողովների (ծառայությունների, խորհրդների, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության խորհրդի), բացառությամբ կենտրոնական բանկի, աշխատակազմերում:

Օրենքի 14 հոդվածին համապատասխան, քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում այդ պաշտոնը զբաղեցվում է մրցույթով:

Քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայության խորհուրդը, իսկ քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր թափուր պաշտոնների համար համապատասխան մարմինը մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում են մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

Օրենքի 19 հոդվածը նախատեսում է, որ յուրաքանչյուր տարի քաղաքացիական ծառայողների առնվազն մեկ երրորդը ենթակա է պարտադիր ատեստավորման: Քաղաքացիական ծառայողի հերթական ատեստավորումը անցկացվում է երեք տարին մեկ անգամ:

Օրենքի 32 հոդվածի 1-ին կետի ե) ենթակետին համապատասխան, քաղաքացիական ծառայողի նկատմամբ որպես կարգապահական տույժ զբաղեցված պաշտոնից ազատումը թույլատրվում է միայն քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ:

Օրենքը կարգավորում է շահերի բախման և խնամիրության հետ կապված հարցերը, սակայն ոչինչ չի ասում հովանավորչության մասին: Համաձայն օրենքի 24 հոդվածի, քաղաքացիական ծառայողը իրավունք չունի՝

- կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական կամ ստեղծագործական աշխատանքից,
- անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ,
- լինել երրորդ անձանց ներկայացուցիչը այն մարմնի հետ հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից,
- ստանալ հոնորար ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար,
- ոչ ծառայողական նպատակներով օգտագործել նյութատեխնիկական, ֆինանսական և

տեղեկատվական միջոցները, պետական այլ գույք:

Ավելին, նույն հոդվածը պահանջում է, որպեսզի այն քաղաքացիական ծառայողը, որը հանդիսանում է որևէ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 10 և ավելի տոկոսի բաժնետեր, իր պաշտոնին նշանակման պահից հետո մեկամսյա ժամկետում իր այդ սեփականությունը հանձնի հավատարմագրային կառավարման:

Ինչպես տեսնում ենք, օրենքով նախատեսված այս սահմանափակումները վառ արտահայտված հակակոռուպցիոն բնույթ են կրում և դրանց կատարման նկատմամբ պատշաճ հսկողության դեպքում կարող են մեծ դեր խաղալ կոռուպցիայի դեմ պայքարում:

Այսպիսով, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, ընդհանուր առմամբ, կարելի է համարել որպես ավելի բաց և թափանցիկ պետական կառույցներ ունենալու ճանապարհին արված մեկ առաջընթաց քայլ:

Սակայն օրենքը ունի մի շարք հակասություններ, որոնք խոցելի են դարձնում քաղաքացիական ծառայողին և դնում նրան կախյալ վիճակի մեջ բարձրաստիճան պաշտոնյաներից և սողանցքներ են թողնում կոռուպցիայի համար:

Մասնավորապես, օրենքի 14 հոդվածը նախատեսում է, որ մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորումը կարող է անցկացվել համակարգչի միջոցով, կամ գրավոր: Մասնակիցների հետ հարցազրույցն անցկացվում է քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված լիազորությունների վերաբերյալ նրանց գործնական կարողությունները ստուգելու նպատակով: Մրցութային հանձնաժողովը հարցազրույցի արդյունքում յուրաքանչյուր մասնակցի համար անցկացնում է փակ գաղտնի քվեարկություն: Մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է կողմ կամ դեմ:

Այսպիսով, մրցույթի հարցազրույցի փուլը հնարավորություններ է թողնում մրցութային հանձնաժողովին՝ իրենց ցանկալի թեկնածուին անցկացնելու, իսկ նրա մրցակիցներին՝ դուրս թողնելու համար: Չի բացառվում, որ օրենքի այս դրույթը կոռուպցիայի դրսևորումների առիթներ տա: Ինչպես «Առավոտ» թերթի 2003 թ-ի հուլիսի 17-ի համարում տրված իր հարցազրույցում նշել էր

քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահը, «...մենք հոգնել ենք բարեկամների, ընկերների, խնամիների խնդրանքներից...»:

Թեև օրենքը, ինչպես արդեն ասվեց վերևում, քաղաքացիական ծառայողի նկատմամբ որպես կարգապահական տույժ զբաղեցված պաշտոնից ազատումը թույլատրվում է միայն քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ, նույն օրենքի 24 և 33 հոդվածները սողանցքներ են թողնում այդ նույն քաղաքացիական ծառայողին առանց քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնության աշխատանքից ազատելու համար: Հայտնի է դեպք, երբ քաղաքացիական ծառայողին (խոսքը ՀՀ Կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության աշխատակազմի ղեկավար Ս.Ջորանյանի մասին է) ՀՀ վարչապետի որոշմամբ, առանց քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնության, ազատել են աշխատանքից և քաղաքացիական ծառայության հանձնաժողովը իր գրությամբ ընդունել է, որ վարչապետը ուներ նման լիազորություն:

Այս ոլորտում կոռուպցիոն ռիսկ է իր մեջ պարունակում այն հանգամանքը, որ քաղաքացիական ծառայությունում անցնելու համար մեծ մրցակցություն է այն պաշտոնների համար, որոնց գործառույթների մեջ մտնում են ստուգումները, վերահսկողությունը, լիցենզիաների տրամադրումը և այլն: Իսկ այն պաշտոնները որոնք օժտված չեն նման գործառույթներով, շատ դեպքերում տվյալ պաշտոնի համար իրականացվում են բազմաթիվ մրցույթներ՝ հայտերի իսպառ բացակայության հետևանքով: Նման վիճակագրությունն իրոք մտահոգության տեղիք է տալիս:

Կոռուպցիայի դեմ պայքարում չափազանց կարևորվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքը: Նշված օրենքի նպատակն է ապահովել պետության և համայնքների կարիքների համար գնումների կատարման գործընթացի արդյունավետ կազմակերպումը, հրապարակայնությունը և թափանցիկությունը, ինչպես նաև պետության և համայնքների համար տնտեսապես շահավետ պայմաններով գնումների կատարումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գնումների ընթացակարգերի կազմակերպման միասնական կանոնների կիրառումը,

պետական կարգավորումը և միջճյուղային համակարգումը, ինչպես նաև ցանկացած անձի համար, անկախ նրա որևէ պետության ռեզիդենտը լինելու հանգամանքից, մասնակցության հավասար իրավունքի գերակայությունը:

Օրենքի 17 հոդվածին համապատասխան, գնումների գործընթացի պետական կարգավորումը և միջճյուղային համակարգումը իրականացնում է լիազոր մարմինը: ՀՀ կառավարության որոշմամբ լիազոր մարմին է ճանաչվել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Մրցույթները կազմակերպում և անցկացնում են մրցութային հանձնաժողովները:

Օրենքի 23 հոդվածը սահմանափակումներ է դնում մեկ աղբյուրից գնումներ կատարելու համար: Այսպես, պատվիրատուն իրավունք ունի մեկ աղբյուրից գնումներ կատարել, եթե՝

- գնման ենթակա ապրանքները, աշխատանքները, ծառայությունները հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղենակային իրավունքով, մրցակցության բացակայությամբ, համապատասխան լիցենզիայի առկայությամբ.
- ծագել է ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման անհետաձգելի չնախատեսված պահանջ և մրցույթի ձևի կիրառումը՝ ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման անհրաժեշտությունը հնարավոր չէր կանխատեսել, և որը պատվիրատուի գործողությունների հետևանք չէ.
- պատվիրատուն որևէ անձից գնելու աշխատանքներ՝ ելնելով տեխնիկական առանձնահատկություններից, որոշում է լրացուցիչ գնումներ կատարել նույն անձից, պայմանով, որ դրանց գինը չգերազանցի սկզբնական պայմանագրի գնի 20 տոկոսը: Մինևույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնումներ կարող է կատարվել միայն մեկ անգամ:

ՀՀ կառավարության 31.10.2001 թ-ի թիվ 1904 որոշմամբ հաստատված կանոնադրության համապատասխան, գնումների

պետական գործակալությունը իրականացնում է հետևյալ գործառնությունները.

- սահմանված կարգով մրցույթի հայտերի ու գնանշումների ընդունումը և գրանցումը.
- իր իրավասությունների սահմաններում կատարվող գնումների ընթացակարգին վերաբերող տեղեկությունների գրառումը՝ համապատասխան փաստաթղթեր կազմելու միջոցով.
- իր կողմից կազմակերպվող գնումների մասնակիցների հակաօրինական գործողությունների նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացակարգերի կիրառումը.
- իր կողմից կազմակերպվող գնումներին հավասար մասնակցության իրավունքի ապահովման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը.
- իր կողմից կազմակերպվող գնումների հրապարակայնության ապահովման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը.
- սահմանված կարգով մրցույթի ու գնանշումների հանձնաժողովների կազմավորումը, դրանց գործունեության կազմակերպումը և լուծարումը.
- մրցույթի կամ գնանշման հաղթողի հետ պայմանագրի կնքումը.
- սահմանված կարգով նամակների, դիմումների և բողոքների քննարկումը, դրանցում հաղորդվող խախտումների և թերությունների վերացման համար միջոցների ձեռնարկումը և այլն:

Օրենքի 51 հոդվածով սահմանվում է, որ կառավարությանը վերապահված լիազորությունները համայնքի կարիքների համար գնումներ կատարելուց իրականացնում է ավագանին:

Օրենքի մի շարք դրույթներ սահմանում են գնումների գործընթացի անկողմնակալության իրավական հիմքերը: Օրենքի 7 հոդվածի 1-ին կետը նախատեսում է, որ գնումներին մասնակցելու իրավունք չունեն այն իրավաբանական անձինք, որոնց հիմնադիրներից (ավելի ճիշտ կլիներ նշել «մասնակիցներից կամ բաժնետերերից») որևէ մեկը մրցույթի

հանձնաժողովի անդամ, պատվիրատուի պաշտոնատար անձ կամ մերձավոր ազգական է: Նույն հոդվածով սահմանվում է, որ, բացառությամբ օրենքով նախատեսված չափանիշներին չհամապատասխանող մասնակիցների, պատվիրատուն իրավունք չունի սահմանափակելու որևէ իրավաբանական անձի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքը, սահմանել մասնակիցների որակավորման այնպիսի չափանիշներ, որոնք պայմանավորված են մասնակցի՝ որևէ պետության ռեզիդենտը լինելու հանգամանքով, կրում են խտրական բնույթ կամ «Գնումների մասին» ՀՀ օրենքով չնախատեսված այլ չափանիշներ:

Օրենքի 32 հոդվածը նախատեսում է, որ մրցույթի մասնակիցները կարող են ներկա գտնվել մրցույթի հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին: Եթե մրցույթի մասնակիցները հայտերի բացման ընթացակարգի վերաբերյալ ունեն մրցույթի հայտերի բացման արձանագրության մեջ չներառված այլ կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներակայացնում են գրավոր, որը կցվում է արձանագրությանը՝ որպես դրա անբաժանելի մաս:

Օրենքի 6 գլուխն ամբողջությամբ նվիրված է բողոքարկման ընթացակարգերին: Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու լիազոր մարմնի և (կամ) պատվիրատուի որոշումները: Պատվիրատուին բողոք ներկայացնելու վերջին ժամկետը պայմանագիրը կնքելու մասին որոշումը հրապարակելու օրվանը հաջորդող հինգերորդ աշխատանքային օրն է: Բողոքը ստանալուց հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն պետք է քննի բողոքը և ընդունի գրավոր որոշում՝ բողոքը լրիվ կամ մասնակի բավարարման կամ բողոքը մերժելու մասին: Եթե բողոքարկողին չի բավարարում պատվիրատուի որոշումը կամ սահմանված ժամկետում որոշում չի ընդունվում, ապա բողոքարկող անձը իրավունք ունի բողոքն ուղղել պետական գնումների գործակալություն՝ պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու մասին որոշումը հրապարակելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

Բողոքի կապակցությամբ լիազոր մարմնի որոշումը համարվում է վերջնական, եթե այն չի բողոքարկվում դատարան:

Ինչպես կարելի է նկատել, օրենքը նախատեսում է լուրջ հակակոռուպցիոն մեխանիզմներ կոռուպցիոն լուրջ ռիսկեր պարունակող այնպիսի ոլորտում, ինչպիսին է գնումների ոլորտը:

Սակայն, օրենքի որոշ թերություններ այնուամենայնիվ կոռուպցիայի համար սողանքներ են թողնում: Այսպես, չնայած օրենքով սահմանված ընթացակարգերին, կոռուպցիայի դրսևորումների համար տեղ է թողնում այն հանգամանքը, որ օրենքը չի բացառում հայտի պահանջների ապօրինի համապատասխանեցումը կոնկրետ մատակարարի բնութագրին, պայմանագրերի մասին տեղեկատվության մտադրյալ սահմանափակումը, գնումների հրատապության պատճառաբանությամբ պայմանագրի կնքումն առանց մրցույթի, որևէ եզակի կապալառուի հետ, մատակարարների առաջարկների գաղտնիության պահանջի խախտման հնարավորությունը, հավանական մատակարարների որակագրկման հնարավորությունը՝ նախորակման փուլի գործընթացում խախտումների միջոցով: Մյուս կողմից, սկզբունքորեն չի բացառվում, որ ապօրինի համաձայնության գան հենց իրենք՝ մատակարարները՝ հայտերի գները ամրագրելու, մրցույթի գործընթացի վրա անձնական ծանոթությունների և բարձրաստիճան պաշտոնյաների հովանավորության միջոցով ազդելու և կաշառքներ առաջարկելու միջոցով:

Հարկ է նշել, որ սույն օրենքի հիմնական նպատակն է խնայել պետական բյուջեի միջոցները, քանի որ տվյալ դեպքում կենտրոնացված գնումների միջոցով կիջնեին ապրանքների գները, դրանով իսկ խնայելով պետական միջոցները: Մինչդեռ, նման ընթացակարգերով ձեռք բերված ապրանքների սահմանված գները ավելի թանկ են լինում, քան դրանք կան մանրածախ շուկայում: Գների նման տարբերությունը խոսում է հենց կոռուպցիայի առկայության մասին:

Հակակոռուպցիոն օրենքների շարքին կարելի է դասել նաև «ՀՀ իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքը: Օրենքի նպատակն է ապահովել իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, քաղաքացիական ծառայողների, ոստիկանության, հարկային և մաքսային մարմինների աշխատողների գույքի և եկամուտների վերաբերյալ

տեղեկատվության թափանցիկությունը և հրապարակայնությունը: Ընդ որում, հայտարարագրման են ենթակա ոչ միայն վերը նշված պաշտոնատար անձանց, այլ նաև նրանց հետ փոխկապակցված անձանց գույքը և եկամուտները: Օրենքի իմաստով, փոխկապակցված անձինք են հայտարարատուի ամուսինը, համատեղ ապրող ծնողը (ծնողները) և համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակը (զավակները), իսկ հայտարարատուի ամուսնացած չլինելու և զավակ չունենալու դեպքում համատեղ ապրող ծնողը (ծնողները) և համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած քույրը (քույրերը) և եղբայրը (եղբայրները):

Ընդ որում, պաշտոնատար անձինք հայտարարատու են նաև զբաղեցրած պաշտոնից ազատվելուն (պաշտոնավարման ավարտին) հաջորդող հինգ տարվա ընթացքում, իսկ փոխկապակցված անձինք՝ երկու տարվա ընթացքում:

Այն պաշտոնյաները, որոնք չեն ներկայացնում իրենց հայտարարագրերը, տուգանվում են նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով (50000 դրամ), իսկ եթե նրանք, տուգանվելուց հետո երեսուն օրվա ընթացքում, նորից չեն ներկայացնում իրենց հայտարարագրերը, ապա տուգանվում են նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով (200000 դրամ): Պետք է նշել, որ սանկցիաները դրանով չեն ավարտվում: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետին համապատասխան, օրենքով սահմանված կարգով իր եկամուտների հայտարարագիրը չներկայացնելը քաղաքացիական ծառայողներին պաշտոնից ազատելու հիմք է: Սակայն նույն օրենքը պաշտոնից ազատելու հիմք չի համարում փոխկապակցված անձանց եկամուտների մասին հայտարարագիր չներկայացնելը, ինչպես նաև հայտարարագրում տեղեկությունները թաքցնելը կամ սխալ տեղեկություններ ներկայացնելը:

Պահանջված տեղեկությունները թաքցնելու կամ սխալ տեղեկություններ ներկայացնելու դեպքում, «ՀՀ իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքին համապատասխան, պաշտոնյան տուգանվում է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, իսկ եթե դա կրկնվում է, ապա՝ երկուհարյուրապատիկի չափով:

Սակայն օրենքը լիարժեքորեն չի կարող ծառայել հակակոռուպցիոն նպատակներին, քանի որ չի նախատեսում ներկայացված հայտարարագրերում պարունակվող տեղեկությունների ստուգում, օրենքի խախտման համար նախատեսված պատժաչափերը փոքր են, փոխկապակցված անձանց ցանկի սակավությունը հնարավորություն է տալիս հայտարարատուներին իրենց գույքը գրանցել ազգականների անունով:

Հակակոռուպցիոն ուղղվածության օրենքների շարքին կարելի է դասել նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումներ կազմակերպելու և անցկացնելու մասին» ՀՀ օրենքը, որով հստակորեն կարգավորվում է ստուգումների կազմակերպման և անցկացման կարգը, կոնկրետացվում է ստուգումներ կատարելու իրավասություն ունեցող մարմինների ցանկը, սահմանափակում է ստուգումների անցկացման պարբերականությունը, սահմանում է ստուգող մարմինների գործողությունների բողոքարկման ընթացակարգը:

Գործադիր իշխանության մարմիններում գոյություն ունեցող կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ միջոց կարող է հանդիսանալ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է, որ Պաշտպանը քննարկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով ու նորմերով նախատեսված՝ մարդու (այդ թվում՝ նաև քաղաքացու) իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները: Օրենքը նախատեսում է, որ պաշտպանն իրավասու է նաև սեփական նախաձեռնությամբ սկսել որևիցե հարցի քննարկում, հատկապես այն դեպքերում, երբ տեղեկություն կա մարդու իրավունքների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի բացառիկ հասարակական նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն օգտագործել իրենց պաշտպանության իրավական միջոցները:

Օրենքը նպաստում է պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից ընդունվող որոշումների և կատարվող գործողությունների թափանցիկության ապահովմանը, ինչը պակասեցնում է կամայական որոշումներ ընդունելու նրանց հնարավորությունները, որով նվազեցնում է կոռուպցիայի հնարավորությունը այդպիսի որոշումներ կայացնելու և գործողություններ կատարելու ընթացքում: Այսպես, օրենքի 11 հոդվածը նախատեսում է, որ բոլորը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց Պաշտպանն իրավասու է դիմելու համապատասխան պետական մարմիններ կամ դրանց պաշտոնատար անձանց, որպեսզի նրանք նպաստեն բացահայտման ենթակա հանգամանքների ուսումնասիրմանը: Բողոքում նշված հարցերի ուսումնասիրումը չի կարող կատարել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար անձը, որի գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են:

Նույն օրենքի 12 հոդվածը նախատեսում է, որ բոլորը քննության ընդունելուց հետո Պաշտպանը, բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով, իրավասու է, մասնավորապես, անարգել այցելել ցանկացած պետական հիմնարկ կամ կազմակերպություն, ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջել և ստանալ բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր, նշված մարմիններից և անձանցից ստանալ բողոքի ուսումնասիրության ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ, ծանոթանալ բողոքին առնչվող ցանկացած նյութի և փաստաթղթի: Պետական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկություններին Պաշտպանը կարող է ծանոթանալ օրենքով սահմանված կարգով: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք պարտավոր են իրենց իրավասությանը վերաբերող պահանջվող նյութերը և փաստաթղթերը, ինչպես նաև բոլորը քննարկելու համար անհրաժեշտ ցանկացած տեղեկություն ներկայացնել Պաշտպանին անվճար և անարգել: Պաշտպանի պահանջած նյութերը, փաստաթղթերը կամ տեղեկությունները պետք է ուղարկվեն Պաշտպանին արագ, հարցումն ստանալուց

հետո՝ ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ:

Օրենքի 15 հոդվածին համապատասխան, քննարկված բողոքի արդյունքների հիման վրա Պաշտպանը իրավասու է ընդունել, մասնավորապես, հետևյալ որոշումները.

առաջարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի գործողությունների (անգործության) կամ որոշումների մեջ նա տեսնում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում, վերացնելու թույլ տրված խախտումները՝ նշելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերականգնման համար անհրաժեշտ և կատարման ենթակա հնարավոր միջոցառումը.

մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները խախտող պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի և դրա պաշտոնատար անձի՝ օրենքին և այլ իրավական ակտերին հակասող նորմատիվ իրավական ակտերն ամբողջովին կամ մասնակի անվավեր ճանաչելու վերաբերյալ դատարան հայց ներկայացնելու մասին, եթե խախտում թույլ տված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար անձը սահմանված ժամկետում ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր չի ճանաչում իր համապատասխան իրավական ակտը.

առաջարկել իրավասու պետական մարմիններին՝ կարգապահական կամ վարչական տույժի ենթարկել կամ քրեական պատասխանատվության կանչել այն անձին, որի գործողություններով (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները և (կամ) որը խախտել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Պաշտպանը կարող է անհրաժեշտության դեպքում հատուկ զեկույցներ ներկայացնել Հանրապետության Նախագահին և Ազգային ժողովին:

Պաշտպանը կարող է ՁԼՄ-ների միջոցով հրապարակել իր միջնորդությամբ չպատասխանած կամ միջնորդության պահանջները չկատարած կամ անբավարար կատարած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վերաբերյալ հատուկ տեղեկություն՝

Պաշտպանի որոշման և միջնորդության վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կան դրա պաշտոնատար անձանց պատասխանների հետ միասին, եթե սպառվել են պետական մարմիններում հարցը լուծելու համար Պաշտպանի բոլոր հնարավորությունները:

Կոռուպցիայի դեմ պայքարում կարևորվում է տնտեսավարող սուբյեկտների համար մրցակցության հավասար պայմանների ստեղծումը և ստվերային տնտեսության կրճատումը և վերացումը: Ստվերային տնտեսության դեմ պայքարում կարևոր դեր կարող է ունենալ «Վերահաշվարկային համակարգի մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը կսահմանափակի ֆինանսական կանխիկ գործարքների հնարավորությունները:

Կոռուպցիայի համար պարարտ հող են ստեղծում օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունները, հարկային օրենսդրության բարդությունը, մեծ անուղղակի հարկերը, հարկատուների անիրազեկությունը հարկային օրենսդրության և սեփական իրավունքների մասին: Հարկային ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի և ստվերային տնտեսության վերացման հարցում չափազանց կարևոր դեր կարող է ունենալ սոցիալական ապահովագրության քարտերի համակարգի ներդրումը:

Գործադիր իշխանության ամենակոռումպացված օղակներից մեկը, հարկային մարմինների հետ մեկտեղ, շարունակում է մնալ մաքսային համակարգը: Մինչդեռ մաքսային համակարգը պետական եկամուտների ապահովման, ներքին շուկայի պաշտպանվածության, ապրանքաշրջանառության կարգավորման, ստվերային տնտեսության դեմ պայքարի կարևորագույն օղակներից է: ՀՀ Կառավարության 2003 թ-ի նոյեմբերի 6-ի որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրում այս համակարգի փոքր հատված է նվիրված, որը չի արտացոլում ոչ մաքսային համակարգի կարևորության և ոչ էլ դրանում տեղ գտած կոռուպցիայի աստիճանը: Ծրագրում շեշտը դրվում է ապրանքների արժեքի հայտարարագրման ժամանակ վարչարարական միջամտությունների անթույլատրելիության վրա: Առանձնապես կարևորվում է նաև մաքսային ծառայողների մասնագիտական

պատրաստվածության, պատասխանատվության աստիճանի, սոցիալական պաշտպանվածության աստիճանի բարձրացումը, ինչպես նաև քաղաքացիների իրազեկության ապահովումը և բողոքարկման արդյունավետ մեխանիզմների ստեղծումը: Իրավացիորեն նշվում է նաև, որ մաքսային օրենսդրությունում անհրաժեշտ է բացառել օրենքի չարաչափման նպատակով դրա երկիմաստ մեկնաբանման և օրենքի անկատարությունից օգտվելու հնարավորությունը, իրականացնել մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մաքսային մարմիններին հետաքրքրող տեղեկություններ պարունակող փաստաթղթերի հետբացթողումային հսկողություն, պարզեցնել և հեշտացնել ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների մաքսային ձևակերպումների ընթացակարգը, բարելավել մաքսային հսկողության արդյունավետությանն ուղղված տեխնիկական և տեխնոլոգիական հագեցվածությունը:

Կառավարության ծրագրում իրավացիորեն նշված է, որ պետական կառավարման համակարգի թերությունների բացահայտման գործում , կոռուպցիայի դեմ պայքարում կարևոր նշանակություն ունի հանրության բողոքարկումների մեխանիզմի ներդրումը: Այն նպաստում է պետական հաստատությունների հանդեպ վստահության ձևավորմանը և գործիք է կոռուպցիայի դեմ տարվող պայքարում հանրության մասնակցությունը ապահովելու համար:

Չարկ է նշել, որ այս առումով չափազանց կարևոր մեխանիզմներ են նախատեսված գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26 գլխով: Նշված գլուխը նախատեսում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունները (անգործությունը) վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը: Ըստ այդ գլխի (հոված 159), պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունը (անգործությունը) վիճարկելու համար հիմք են նշված ակտն օրենքին հակասելը և դիմողի՝ Չայաստանի Չանրապետության Սահմանադրությամբ ու օրենքներով

երաշխավորված իրավունքի և (կամ) ազատության խախտման փաստի առկայությունը:

Ըստ նույն օրենսգրքի 160 հոդվածի, օրենքին հակասող վերը նշված ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումը, գործերի ենթակայությանը համապատասխան, տրվում է քաղաքացիական գործեր քննող դատարան կամ տնտեսական դատարան:

Այսպիսով, օրենսդրությունը նախատեսում է մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս անձին իր օրինական շահերը պետական պաշտոնյաների մոտ պաշտպանել ոչ թե նրանց կաշառք տալով կամ մեկ ուրիշ ձևով շահագրգռելով, այլ դատարանի միջոցով: Այս մեխանիզմը գործադիր իշխանության նկատմամբ դատական իշխանության և հասարակության վերահսկողության հնարավորության դասական օրինակ է: Սակայն, ինչպես արդեն ասվել է վերևում, այս մեխանիզմը առայժմ գրեթե չի գործում՝ դատական իշխանությունների կախյալ վիճակի և կոռումպացված լինելու պատճառով, ինչպես նաև այն պատճառով, որ քաղաքացիները չեն վստահում դատարաններին ավելի շատ, քան նույնիսկ գործադիր իշխանությանը (հիշենք վերը բերված՝ Հայաստանի ժողովրդավարական ֆորում հասարակական կազմակերպության կողմից անցկացված հասարակական կարծիքի ուսումնասիրությունների արդյունքը, որը ցույց է տվել, որ հարցմանը մասնակցած ընտանիքների 59 տոկոսը չի դիմում դատարան, որովհետև համոզված է, որ առանց կաշառքի դատարաններում ոչ մի հարց չի լուծվում):

**ՀԱՎԵԼՎԱԾ. ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱԴՐԲԵՋԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ,
ՂՐԴՋՍՏԱՆԻ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ՏԱՋԻԿՍՏԱՆԻ ԵՎ ՌԻԿՐՎԻՆԱՅԻ
ՀԱՄԱՐ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ
ԾՐԱԳԻՐԸ:**

Համաձայն այդ գործողությունների ծրագրի, Հայաստանի Հանրապետությանը առաջարկվել են հակակոռուպցիոն մի շարք գործողություններ, որոնցից են՝

- Շարունակել կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի և մոնիտորինգային խմբի՝ գործողության մեջ դնելու ծրագիրը: Հատուկ ուշադրություն հրավիրել այդ մարմինների աշխատակիցների,

ներառյալ համապատասխան գործադիր մարմինների (վարչական, ֆինանսահիշատակական, իրավապահ, քննչական), ինպես նաև խորհրդարանի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների բարձր բարոյական կերպարի վրա:

- Մանրակրկիտ հաշվետվության և ներդաշնակ մեթոդիկայի միջոցով կատարելագործել կոռուպցիայի փաստերի և կոռուպցիայի հետ կապված իրավախախտումների վիճակագրական մոնիտորինգը և հաշվետվությունը: Ապահովել Համակարգող խմբին քաղաքացիական ծառայության, ոստիկանության, դատախազության, դատական համակարգի բոլոր ոլորտները ներառող հաշվետվությունների ներկայացումը, ինչը հնարավորություն կտա համեմատական վերլուծություններ անցկացնել այդ հիմնարկների միջև:
- Համախմբել կոռուպցիայի դեմ պայքարի իրագործմանն ուղղված միջոցառումները և ապահովել կորորդինացման բարելավումը, հատկապես դատախազությունում նոր ստեղծված՝ կոռուպցիայի դեմ պայքարի բաժնի հետ: Ապահովել ոստիկանությունում կոռուպցիայի դեմ պայքարի բաժնի հետագա մասնագիտացումը և ապահովել իրավապահ մարմինների մասնագիտացված բաժինների կապը դատախազության մասնագիտացված բաժնի հետ: Միջոցներ ձեռնարկել, որպեսզի նվազագույնի հասցվեն կոռուպցիայի հետ կապված գործերով քննություն կատարող իրավապահ մարմինների աշխատակիցների գործունեությանը միջամտելու և նրանց նկատմամբ անօրինական ազդեցություն գործելու հնարավորությունները: Գիտելիքների և տեղեկությունների փոխանակումը պետք է լինի ուղիղ և գաղտնի, իսկ որոշումներ ընդունող վարչական աշխատակիցների (տարբեր բաժինների ղեկավարների) քանակը պետք է լինի նվազագույն:

- Հայաստանին անհրաժեշտ է ուսումնասիրել այն երկրների փորձը, որոնցում հիմնված են եղել կոռուպցիայի դեմ պայքարի հատուկ անկախ մարմիններ, որոնք օժտված էին մի շարք ռեպրեսիվ (քննչական, մեղադրական) և, կանխարգելող և կրթական լիազորություններով (այդպիսի մարմնի ամենահայտնի օրինակ կարող է ծառայել Հոնգքոնգում ձևավորված՝ կոռուպցիայի դեմ պայքարի անկախ հանձնաժողովը):
- Շարունակել ջանքերը, ուղղված կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում իրավապահ մարմինների աշխատակիցների, դատախազների, դատավորների և այլ իրավապահ մարմինների աշխատակիցների համատեղ հատուկ ուսուցման համար, ապահովել անհրաժեշտ միջոցներ կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրության կատարման համար:
- Անցկացնել ուսուցողական արշավներ և կազմակերպել ուսուցում համապատասխան հասարակական կազմակերպությունների, պետական ծառայողների և մասնավոր ոլորտի ներկայացուցիչների համար՝ կոռուպցիայի ակունքների և ազդեցության, դրա դեմ պայքարի միջոցների և կանխարգելման վերաբերյալ, ինչպես նաև՝ քաղաքացիների իրավունքների և պետության հետ նրանց փոխհարաբերությունների վերաբերյալ:
- Վավերացնել կոռուպցիայի համար քրեական և քաղաքացիական պատասխանատվության եվրոպայի Խորհրդի Կոնվենցիան, ստորագրել և վավերացնել կոռուպցիայի դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիան:
- Փոփոխություններ մտցնել կոռուպցիոն իրավախախտումների բնորոշումների մեջ, համապատասխանեցնելով դրանք միջազգային չափանիշներին, ինչպիսիք են կոռուպցիայի դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան, քրեական և քաղաքացիական պատասխանատվության

Եվրոպայի Խորհրդի Կոնվենցիան: Կոռուպցիային վերաբերող հանցագործություններով հանցակազմի որոշման թափանցիկության և կանխատեսելիության բարձրացման համար քննարկել ակտիվ և պասիվ կաշառակերությունը ներառող ավելի քիչ քանակով ընդհանուր դրույթներով գոյություն ունեցող բարդ դրույթները փոխարինելու հարցը: Այն դրույթը, որը արդարացնում է որոշակի հանգամանքներում պետական ծառայողի կողմից 5000 դրամ արժեքը չգերազանցող նվերի ստացումը, պետք է վերացվի: Օրենսդրության մեջ պետք է դրույթ մտցվի, որը քրեական պատասխանատվություն նախատեսի ազդեցության առուվաճառքի համար:

- Վերանայել կոռուպցիոն հանցագործությունների համար վաղեմության գոյություն ունեցող ժամկետները:
- Ընդունել անձեռնմխելիությունից զրկելու հստակ, հասարակ և թափանցիկ ընթացակարգեր և վերանայել անձեռնմխելիության կարգավիճակ ունեցող անձանց կատեգորիան և անձեռնմխելիության չափերը, որպեսզի ապահովվի դրանց համապատասխանությունը միջազգային չափանիշներին և կանխվի դրանց միջոցով կոռուպցիոն իրավախախտումներ կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելուց պաշտպանելը:
- Ընդունելով, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը կոռուպցիոն իրավախախտումների համար միջազգային նորմ է, Հայաստանին անհրաժեշտ է իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու փորձ ունեցող կազմակերպությունների միջոցով դիտարկել իրավաբանական անձանց պատասխանատվությունը սահմանող նորմերի ներմուծումը Հայաստանի իրավական համակարգ:
- Փոփոխություններ մտցնել հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների

պետականացման վերաբերյալ օրենսդրության մեջ՝ միջազգային չափանիշներին համապատասխան (ինչպիսինն է Եվրոպայի Խորհրդի Կոնվենցիան հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, որոնման, առգրավման և պետականացման մասին): Ապահովել կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ձեռք բերված եկամուտների պետականացման պարտադիր կիրառումը: Նախատեսել, որ պետականացման ռեժիմը թույլ տա պետականացնել կամ կոռուպցիոն բոլոր հանցագործությունների արդյունքում ստացված եկամուտը, կամ էլ՝ համապատասխան արժողության գույք, կամ նույն ծավալով դրամական սանկցիաներ կիրառել, ինչպես նաև նախատեսել երրորդ անձանցից գույքի բռնագրավման հնարավորությունը: Վերանայել քրեական գործի քննության ընթացքում և մեղադրանք առաջադրելու փուլում կոռուպցիոն եղանակով ձեռք բերված միջոցների բացահայտման և առգրավման ժամանակավոր միջոցները:

- Ապահովել, որպեսզի «պաշտոնատար անձ» հասկացությունը իր մեջ ներառի բոլոր պետական ծառայողներին, ինչպես նաև անձանց, որոնք պաշտոնական լիազորություններ են իրականացնում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության բոլոր մարմիններում, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև պաշտոնյաներին, որոնք ներկայացնում են պետության շահերը առևտրային համատեղ ձեռնարկություններում կամ կազմակերպությունների տնօրենների խորհրդում:
- Քրեական պատասխանատվություն սահմանել այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց կաշառակերության համար, կամ «պաշտոնատար անձ» հասկացության ընդլայնման միջոցով, կամ

ել՝ տվյալ հանցագործության համար քրեական օրենսգրքում առանձին հոդվածով քրեական պատասխանատվություն սահմանելու միջոցով:

- Ավանդ ներդնել կոռուպցիայի գործերի քննության և քրեական հետապնդման միջազգային իրավական փոխօգնության ապահովման համար:
- Ներմուծել պետական ծառայության ընդունելու միասնական համակարգ, որը առավելագույս կկրճատեր կամայական որոշումների ընդունման հնարավորությունը:
- Ընդունել միջազգային չափանիշների վրա հիմնված՝ պետական ծառայողների էթիկայի միասնական կանոնագրքեր կամ վարքագծի կանոններ (օրինակ՝ Եվրոպայի Խորհրդի ծառայողների վարքի օրինակելի կանոնագիրք) և առանձին՝ հատկապես կոռումպացման ենթակա մասնագիտությունների (ինչպիսինքն են ոստիկանությունը, դատարանները, հարկային ծառայության աշխատակիցները, հաշվապահները և այլ) համար հատուկ կանոնագրքեր: Բացի այդ, պատրաստել և լայնորեն տարածել կոռուպցիայի, շահերի բախման, էթիկական նորմերի, սանկցիաների և կոռուպցիայի փաստերի վերաբերյալ ձեռնարկ պետական ծառայողների համար: Դիտարկել էթիկայի կանոնագրքի խախտման համար կարգապահական պատասխանատվության սահմանման հարցը: Դիտարկել էթիկայի կանոնների իրականացումը վերահսկող մարմնի ստեղծման հնարավորությունը:
- Ապահովել մշտական վերահսկողություն մվերներ ստանալու կանոնների պահպանման և շահերի բախման դեպքերի նկատմամբ և տվյալ կանոնները կպահպանելու համար համաչափ սանկցիաների սահմանում:
- Վերլուծել պետական ծառայողների սեփականության նկատմամբ հսկողության համակարգը՝ հնարավոր սողանցները բացահայտելու և դրանց վերացման առաջարկներ

մշակելու համար: Քննարկել եկամուտների հայտարարագրման պահանջները չպահպանելու համար պետական ծառայողների պատասխանատվության խստացման հարցը:

- Սահմանել կոռուպցիայի մեջ կասկածները հայտնելու պարտականություն: Միջոցներ ձեռնարկել պետական հիմնարկների ծառայողների կարգապահական պատասխանատվությունից և հետապնդումից պաշտպանելու համար այն բանի համար, որ նրանք իրավապահ մարմիններ կամ դատախազություն են հայտնել իրենց հիմնարկների ներսում կասկածելի երևույթների մասին, ինչպես նաև իրազեկել նման միջոցառումների մասին քաղաքացիական ծառայողներին:
- Պետական գնումների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և ընթացակարգերի թափանցիկության համար ներմուծել հայտերի էլեկտրոնային տրման համակարգ: Էլեկտրոնային համակարգում հրապարակել բոլոր տվյալները, այդ թվում՝ լիազորված մարմին տրված բոլոր գանգատները և դրանց վերաբերյալ պատասխանները: Պետական գնումների մասին ամբողջ տեղեկատվությունը, որը չի հրապարակվում, պետք է տրվի հարցման հիման վրա, բացի այն տեղեկատվության, որը վերաբերում է պետական կամ առևտրային գաղտնիքի:
- Ընդունել փողերի լվացման վերաբերյալ օրենքների ամբողջական փաթեթ, որը կդնի Հայաստանին միջազգային օրենսդրության մակարդակի վրա և ապահովել ֆինանսական խուզարկության ստեղծումը:
- Պետական ծառայողների և քաղաքացիների միջև հարաբերությունների կատարելագործման և տեղեկատվության մատչելիության հարցերը լուծելիս խստորեն հետևել կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարությանը:

- Կոռուպցիոն իրավախախտումների բացահայտման նպատակով ապահովել ֆինանսական վերահսկողություն/աուդիտ կատարող մարմինների միջև մշտական և ազատ շփումների և գործունեության կոորդինացման հնարավորություն: